



Հեղազորական իսլի ղեկավար՝
ՀՈՎՍԵՓ ԻՎԱՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հեղազորական իսլի անդամներ՝
Ա.Շ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ա.Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա.Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Մ.Է. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Հ.Ս. ԶՈՒՀԱՐՅԱՆ
Հ.Հ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 352(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)1
Դ 481

Հրատարակության է երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը

Մասնագիտական խմբագիր՝
Սարգսյան Մ. Տ.
տ.գ.դ., պրոֆեսոր

Գրախոսներ՝ Միքայելյան Մ.
տ.գ.դ., պրոֆեսոր
Մարկոսյան Ա. Խ.
տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝
Աթոյան Կ. Լ. (նախագահ)
տ.գ.դ., պրոֆեսոր
Վարդանյան Գ. Ի.
տ.գ.դ., պրոֆեսոր
Սուվարյան Յու. Մ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր

Տնտեսական գարգացում / Հ. Աղաջանյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2014
Դ 481 -164 էջ.- («Ամբերդ» մատենաշար):

Աշխատանքում ներկայացված են տնտեսական գարգացման հայեցակարգային ընկալումները, զարգացմանը միտված մակրոտնտեսական քաղաքականության, կայուն զարգացման ինտվացիոն քաղաքացուցիչի արդունավետության, տնտեսական զարգացման և քաղաքական կայունության փոխանակության, ՀՀ տնտեսությունում ներդրումներից ակնկալվող վերադարձի հիմնախնդիրները, ՀՀ տնտեսական զարգացումը ինտեգրման համատեքստում: Նախատեսված է այդ հարցերով գրադարձ մասնագետների, ուսանողների, ասպիրանտների, դասախոսների համար:

ISBN 978-9939-61-086-3

ՀՏԴ 352(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)1

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2014 թ.
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014 թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ	6
1.1. Տնտեսական զարգացման եռյունը և ընդհանուր լմբոնումը .. 6	
1.2. Պետությունը և պատասխանատու զարգացման մարտահրավերը	12
1.3. Սերողաբանական մոտեցումները զարգացման ուսումնա- սիրություններում.....	16
1.4. Տնտեսական զարգացման հիմնական բնութագրերը և ուղղությունները.....	20
1.5. Մարդկային զարգացման հիմնախնդրի հայեցակարգային դրվագը.....	25
2. ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՄԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆՆԵՐԸ	29
2.1. Զարգացման քաղաքականության մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում.....	34
3. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՌՎԱՑԻՈՆ ԲԱՂԿԱՑՈՒՅԻՉԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ	41
4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	54
5. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐԱԴԱՐՁԸ	63
5.1. Կապիտալի ծախսի հաշվարկման տարածված մեթոդաբանու- թյունները և դրանց մասնակի կիրառությունը ՀՀ տնտեսության համար: Ներդրումներից ակնկալվող վերադարձի արժեքը Հայաստանում.....	63
5.2. Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ բանկերի կապիտալի վերադարձի ընթացիկ միտումները	67
5.3. Բանկային համակարգում կապիտալի ակնկալվող վերադարձի ցուցանիշի ազդեցությունը տոկոսադրույթների մակարդակների վրա	69

6. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԻՆՏԵԳՐՈՒՄՆ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ	74
6.1. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքը և դիմամիկան ըստ ապրանքների և երկրների	74
6.2. Մոտեցումների քննական վերլուծություն	85
6.3. Մաքսային միությանը (ՄՄ) և Եվրոմիությանը (ԵՄ) ինտեգրվելու խնդիրները	89
Եզրակացություններ և առաջարկություններ	98
Օգտագործված գրականության ցանկ	104
Ամփոփումներ	107

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսության վերափոխումները գրեթե չեն ունեցել այն ուղղվածությունը, ինչը հեռանկարում կարող էր ապահովել տեխնոլոգիապես զարգացած տնտեսության ձևավորում: Իրականացված վերափոխումների պատկերը հետևյալն է. արդյունավետ չի օգտագործվել տնտեսության ներուժը, որի հետևանքով մի շաբթ ոլորտներում արձանագրվել են կորուստներ, անհրաժեշտ մակարդակի վրա չեն գտնվել ոչ երկարաժամկետ ներդրումները, ոչ չ ուսուրաների ուղղորդվածությունը դեպի իրական հատված, առկա է կապիտալի և որակյալ աշխատուժի զգալի արտահոսք, չի իրականացվել տնտեսության արդյունավետ կառուցվածքային փոփոխություն, թույլ է սպասարկող կամ լուսանցքային երկիր դառնալու վտանգին դիմակայությունը, սոցիալական բնեուացվածությունը հասել է ծայրահեռ աստիճանի, տնտեսությունում բարձր է մոնոպոլացման մակարդակը, առկա է տնտեսական և քաղաքական համակարգերի ոչ արդյունավետ հակակշռում, ցածր է ինստիտուցիոնալ համակարգի կայացման և արդյունավետ գործունեության մակարդակը:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը պահանջում է մշակել զարգացման որոշակի հայեցակարգ և այդ համատեքստում դիտարկել տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Զարգացման հետ մեկտեղ, ժամանակի ընթացքում, հենց զարգացման վերաբերյալ պարկերացումները նույնաես փոփոխվում են: Դա վերաբերում է նաև դնդանական զարգացմանը, որը զարգացման ընդհանուր գործընթացի հիմնական բաղադրիչներից է: Զարգացման մասին ընկալումներն ունեն իրենց էվոլյուցիան. վերջինս բարածվում է ոչ միայն զարգացման դեսաբանների ու փորձագետների, այլև երկրի կառավարման մարմինների, համապատասխան միջազգային կազմակերպությունների, քաղաքագետների, քաղաքական գործիչների, գործարարների, ինչպես նաև հանրության լայն շրջանակների վրա: Իհարկե, դա բոլորովին չի նշանակում, թե նրանք միանման են մրգածում զարգացման մասին, կամ նրանց ընկալումները փոխվում են համաժամանակյա, միևնույն ուղղությամբ և խորությամբ: Ավելին՝ բարագետակ շահերի, համոզմունքների և կարծրագործող զարգացման նոր գաղափարները, որպես կանոն, դժվարությամբ են հարթում ճանապարհ դեպի իրականացում:

Այս համագեղագում կարևոր են հետևյալ դեսանեյունները՝ դնդանական զարգացման էության և ընդհանուր ըմբռնման հիմնական դեմքները, պարագանագում զարգացման մարդարավերը՝ ընդգծելով պետքության դերը դրա դիմագրավման մեջ, մեթոդաբանական մոդելումները զարգացման ուսումնասիրություններում, դնդանական զարգացման բնութագրերը և ուղղությունները, մարդկային զարգացման հայեցակարգային մոդելումները և դրույթները:

1.1

Տնտեսական զարգացման էությունը և ընդհանուր ըմբռնումը

Զարգացման երևույթի ուսումնասիրությունները ծավալվել են երկրորդ համաշխարհային պարերազմից հետո, մեծացել ու կարևորվել է դրանց հրաժարապությունը: Այս ուղղության գիրական արդյունքներն արժանացել են Նորեկյան մի շարք մրցանակների: Դրանցից 1979 թ. մրցանակը, որ սպացան Արթուր Լյուիսը և Թեոդոր Շուլցը, ուղղակիորեն վերաբերում էր զարգացող երկրների դնդանական հիմնախնդիրների հե-

դագուբություններին: Սակայն թե՛ դրանից առաջ, թե՛ հետագայում եղել են զարգացման հիմնախնդիրներին սերպորեն առնչվող մրցանակներ²:

Գ. Մյուրդալը նշում է, որ ինքը, իբրև ինսպիրուցիոնալ գոնդեսագեր, պարփառված է եղել զարգացումն ըմբռնելու որպես քաղաքական, սոցիալական և գոնդեսական ամբողջ համակարգի փեղաշարժ, փորձելու հիմնախնդիրները քննարկել և լուծել համաշխարհային միջավայրի վիրույթում, ինչպես նաև արդահայրել է ուշագրավ դադողություններ մարդկային կենսավիճակների լայն շրջանակի վերաբերյալ³: Այս հիմնադրույթն արժեքավոր ու հրապար է ընդհանրապես, քանի որ զարգացումը միշտ էլ համալիր բնույթի բազմաշերտ գործընթաց է, իսկ գոնդեսական զարգացումն անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն գոնդեսական, այլև արդարագոնդեսական դարաբնույթ միջավայրերի ու գործոնների հետ փոխազդեցության վիրույթում: Բացի դրանից, ցավոք, դեռևս շարունակվում է փեղին լինել զարգացած երկրներին վերաբերող՝ Գ. Մյուրդալի սկզբունքային քննադատությունը՝ թերզարգացած երկրների կամ հետամնաց դարածաշրջանների հանդեպ պարեհապաշտ (օպորդունիսական) անվարբերության և կրնֆորմիզմի համար⁴:

Ձ. Շուշը նշանակալից ներդրում է կարարել մարդկային կապիտալի գոնդեսության մշակման և զարգացման համարեքսպում դրա որոշիչ դերի հիմնավորման մեջ: Ելնելով այն հանգամանքից, որ հողը և մյուս իրային գործոնները գերազանահարված են, իսկ մարդկային սուբյեկտների որակը՝ թերզանահարված, նա եզրակացրել է. «...Ներդրումը բնակչության որակի բարեկավման մեջ կարող է էապես նպաստել աղքար մարդկանց գոնդեսական հետանկարներին և բարեկեցությանը»⁵: Ինքնին խոսուն է նաև Ձ. Շուշը անփոփումը. իր նորելյան դասախոսության կենդրոնական միգրը բնակչության որակի և գիտելիքների կարևորության հիմնավորումն էր⁶: «Եթագայում այս գաղափարներն ամուր հիմք

² Այսպես՝ 1974 թ. երկու մրցանակակիրներից Գ. Մյուրդալը թե՛ գործոնականորեն, թե՛ հիմնարար հետազոտություններով, դարձներ է նվիրել զարգացող երկրների հիմնավորների լուծմանը: Այդ մրցանակի շնորհման հիմքերից մեկը գոնդեսական, սոցիալական և ինսպիրուցիոնալ գործընթացների փոխազդեցության ուսումնասիրությունն էր: 1993 թ. մրցանակին արժանացան Դ. Նորթը և Ռ. Ֆողեր՝ գոնդեսության պարմության բնագավառում նոր ուղղություն ստեղծելու համար: 1998 թ. մրցանակին դարձավ Ա. Մենը՝ բարեկեցության գոնդեսագիրության հիմնախնդիրների ուսումնավիրության մեջ ավանդի համար: Այս հեղինակների գիտական մշակումներին բնորոշ ընդհանրություն կարող է համարվել զարգացման դարբեր գոնդեսության ներքի կարևորումը, դրանց շաղկապումը:

³ Տե՛ս Gunnar Myrdal, Prize Lecture: The Equality Issue in World Development. Nobelprize.org, Nobel Media AB 2013. Web. 19 Aug 2013. http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html

⁴ Տե՛ս նոյն գլուխ:

⁵ Theodore W., Schultz-Prize Lecture: The Economics of Being Poor. Nobelprize.org, Nobel Media AB 2013. Web. 19 Aug 2013. http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1979/schultz-lecture.html

⁶ Տե՛ս նոյն գլուխ:

դարձան մարդկային զարգացման հայեցակարգի ու դրա բարեհաջող կիրառումների համար: Տվյալ դիրքակետից էական է, որ, մի կողմից՝ պարշաճ բնույթագրվում է մարդկային ռեսուրսների դերը՝ որպես կրնքեսական զարգացման միջոց, մյուս կողմից՝ զարգացման վերջնանպարակները նույնպես իմաստավորվում են հանրության ընդհանուր կենսապահովման ու բարեկեցության բարձրացման շնորհիվ:

Ազեկի քան երկու փասնամյակ առաջ զարգացման վերաբերյալ այս մտայնությունն արդացողվեց նաև համաշխարհային բանկի պաշտոնական դիրքորոշման մեջ. «Զարգացման մարդարավերը կյանքի որակը բարելավելն է: Տարկապես աշխարհի աղքափ երկրներում կյանքի ավելի լավ որակն ընդհանրապես պահանջում է ավելի բարձր եկամուտներ, սակայն ներառում է անհամենափ ավելին: Որպես ինքնին նպարակ՝ այն ընդգրկում է ավելի լավ կրթություն, առողջության և սննդառության ավելի բարձր չափորոշիչներ, ավելի նվազ աղքափություն, ավելի մաքուր բնամիջավայր, ավելի հավասար հնարավորություններ, անհարական ավելի մեծ ազափություն և մշակութային ավելի հարուստ կյանք»⁷: Այս գեղեղ, առնվազն անվանապես, շեշտադրվել են գնդեսական զարգացման սոցիալական ու գոյարանական հանգույզային ուղենիշները:

Այդ առումով, հավկանշական է նաև Մայթ Թողարքի բնորոշումը, որով նա համարում է զարգացման վերաբերյալ խորքային ընկալում-ները և փեսանկյունները. զարգացումը սահմանվում է որպես բոլոր մարդկանց կյանքի բարելավման գործընթաց: Այնուհետև Թողարքն զարգացման հավասարապես կարևոր փեսանկյուններ է համարում մարդկանց բարձրացող կենսամակարդակը, նրանց ինքնահարզանքին նպաստող պայմանների սրբեղծումը՝ սոցիալական, քաղաքական և պնտեսական այնպիսի համակարգերի ու ինսպիրուվումների միջոցով, որոնք մեծ դեեւ են քալիս մարդկային արժանապարփությանը և հարգանքին, ինչպես նաև մարդկանց ազարության մեծացումը՝ նրանց ընդրության փոփոխականների շրջանակի ընդլայնմանը, մասնավորապես՝ սպառողական ապրանքների և ծառայությունների բազմազանության աճով⁸:

Այսպիսով՝ պնդեսական զարգացումը դիմամիկ առաջընթաց է, որի շնորհիվ գլուխի են ունենում երկրի ողջ բնակչության ինքնուրույն կենսապահովման կարողությունների մեծացում՝ դրանց ընդլայնման, նորացման և բազմազանեցման ճանապարհով, դրա հիման վրա՝ կենսապայմանների և ապրելակերպի ընդհանուր բարեկավումներ, ինչպես նաև սպետծվում են մարդկային ներուժի լիարժեք իրացման նպաստավոր նախադրյաններ: Զարգացումը պահանջում է քաղաքակրթական իրեալի

⁷ World Bank, *World Development Report*, 1991 (New York: Oxford University Press, 1991), p. 4.

⁸ Stiu Todaro M., Economic Development. Addison-Wesley Publishing Company, 1996, 6th ed., p 685.

մշակում, դեպի դա փանող ռազմավարության ընդուրություն, համապատասխան ռեսուրսներ, ջանքեր և ներդրումներ ապագայի մեջ: Ներկայում ավելի զարգացած են այն երկրները, որոնք նախկինում ավելի շատ և/կամ արդյունավետ ներդրումներ են կարարել: Այս օրինաչափությունը համընդհանուր է. վաղն առավել զարգացած կլինիկ նրանք, որոնք այսօր կարարում են անհրաժեշտ ներդրումներ զարգացման նախագծերում:

Իհարկե, զարգացումն իրականում առաջընթաց է ոչ ամեն առումով, բանի որ դրան ուղեկցում են նաև բացասական երևույթներ: Վյավես որ, ինչպես նշում է Յանոշ Կորնային՝ «Մենք պետք ենք գիտակցենք, որ «առաջընթաց» բառը միշտ հնչում է դրական իմաստով, ունի արժեքային նշանակություն»: Ընդունելով, որ գեխնիկական առաջընթացի նվաճումները կարող են նաև չարաշակվել, նա այնուհետև եզրակացնում է, որ գեխնիկական փոփոխությունների ուղղվածությունը հաճախ անվանում են առաջընթաց, բանի որ դրանում անհամեմապ ավելի շատ են արժանիքները, առավելությունները, քան թերությունները⁹: Կարևոր է ոչ միայն զարգացման արդյունքների ու բացասական հետևանքների միջև ցանկալի հաշվեկշռի պահպանումը, այլև կողմնակի թերությունների հնարավորինս նվազեցումը և կանխարգելումը: Այդ հարցում առավել ներուժ ունեն միշտ և գործող արժեքային կողմնորոշումները:

Հասարակության կյանքն ունի որոշակի էվոլյուցիոն ուղղվածություն: Զարգացումը այդ էվոլյուցիան ուղղորդելու, կազմակերպելու, այսինքն՝ գիտակցված ու կամային միջամբության գործընթաց է: Դրա իրականացման ճիշտ փարբերակը զարգացման ընդհանուր ռազմավարության մշակումն է: Ըստ Էռլեյյան, խոսքը ցանկալի հասարակության ու ցանկալի փնտեսության բնութագրերի հսկակեցնան և դրանց հասնելու ուղիների մասին է: Դա ոչ թե հեռավոր ապագայի մրգացածին մոդել է, այլ ներկա ընթացքի կարգավորման միջոց: Տեսքնարար՝ ռազմավարական հայեցակարգային մոդելեցումները գործնականում կարարում են ուղեցույցի շաբ կարևոր դեր: Նախ և առաջ, զարգացման ռազմավարության առկայությունը հնարավորություն է ընձեռում խուսափելու մարդավարական խարիսխումներից, իրավիճակային թերափ լուծումներից, որոնք անխուսափելի են հակառակ պարագայում, խորացնելու են եղած հիմնախնդիրները, առաջացնելու նորերը, բարդացնելու դրանց լուծումը: Այնուհետև՝ զարգացման ռազմավարության և մարդավարական ընթացքի համադրմամբ բացահայփում են շեղումները, ակնառու է դառնում դրանց բնույթը և չափը: Այս եղանակով հնարավոր է ժամանակին պարզել շեղումների պարզաբնուրությունը, դրանցով պայմանավորված խոչընդու

⁹ Տե՛ս **Կորնաս Я.** Инновации и динамизм: взаимосвязь систем и технического прогресса. Вопросы экономики, 2012, N 4, էջ 18.

ները, մշակել ու գործադրել վերջիններիս հաղթահարման համար անհրաժեշտ միջոցառումներ:

Զարգացման ռազմավարության հիմքերի ամրությունը պայմանավորված է այն արժեքների համակարգով, որ տվյալ հանրությունը ձգբում է արմագագործել: Ներքևաբար՝ արժեքներն ունեն վճռորոշ նշանակություն: Համենայնդեպս, փաստացի ընթացքը անուղղակիորեն բացահայփում է վարվող քաղաքականության իրական շարժադրիթները: Վերը նշված ուղեցույցի դերը լիարժեք կարող են խաղալ ճշմարիկ ու մնայուն կենսական արժեքները: Հակառակ ուղղվածությամբ արժեքները բացառում են կայուն, ընդգրկուն ու գրևական զարգացման հնարավորությունը: Վերջին հաշվով, փիրող արժեհամակարգն է փալիս այն հարցի պարագաները, թե զարգացման ի՞նչ փուլում է գրնվում տվյալ հանրությունը: Դա նաև նշանակում է, որ զարգացման փուլերի հաջորդափոխության հիմքում ընկած են արժեհամակարգային անհրաժեշտ փոփոխությունները՝ նախկին մոլորությունների գիրակցում և հաղթահարում, վերանայումներ, վերահնապավորումներ, գերակայության փոխարինումներ և այլն:

Տնտեսական զարգացումն առողջ առաջընթաց է, եթե այս կամ այն կերպով ու չափով վերաբերում է հանրության ամեն մի անդամի: Այդ գետակետից կարևոր է անդրադառնալ երկվության (դուալիզմի) երևույթին, որը համապարած է ինչպես առանձին երկրներում, այնպես էլ, ավելի խորությամբ, գլոբալ փիրույթում: Հակիրճ բնութագրմամբ՝ զարգացման երկվությունը հակասական իրողությունների գոյակցությունն է, ինչպես օրինակ՝ պերճանքի և թշվառության համաժամանակյա առկայությունը¹⁰: Զարգացման արդյունքներից մեկն այն է, որ ասդիմանաբար կրծագվեն նման հակադրությունները: Մինչդեռ, հաճախ դրանք ոչ միայն չեն հաղթահարվում, այլև ծավալվում ու խորանում են, ինչն անհամապեղելի է զարգացման հետ: Ներքևաբար՝ զարգացման համգուցային ընկալումներից մեկը պետք է կապել երկվության դրսերումների արգելակման և չափավորման հետ:

Երկվության ընդունումը նշանակում է, որ զարգացումն ինչ-որ պահի շեղվել է մայրուղուց: Խևական, եթե հասարակության գերակշիռ մասի փոփեսական դրությունը տվեական ժամանակ չի բարելավվում, լավագույն դեպքում մնում է նույնը, իսկ երբեմն էլ՝ վագրթարանում, մինչդեռ փոքր մասի բաժինն անընդհափ մնանում է, դիրքերն ամրանում են, ապա որևէ հիմնավորմամբ դժվար է սա զարգացում համարել: Այլապես՝

¹⁰ Գրականության մեջ նշվող դուալիզմի դրսերումները բավականին շաբ են ինչպես երկրի ներսում, այնպես էլ համաշխարհային փիրույթում: Դրանցից հիմնականում փիպական են փնտեսության պիպական և արդիական հարվածների, հերամնաց և զարգացած երկրների, ծայրամասերի ու կենդրոնի գոյակցությունը, ինչպես նաև բնեշացման դրսերումները եկամուգների, հարսպության, սոցիալական կարգավիճակի առումով և այլն:

զարգացման դրսերում պիտի համարվի նաև հանրության արգունյալ շրջանակում նյութական կարողությունների գերկու փակումը՝ մեծամասնության սույն գոյագրելաման պայմանականությամբ:

Անկախ երկվությունից, զարգացման հարկանշներից մեկը անհամաշափությունն է: Դա դրսերվում է ինչպես առանձին երկրի ընթացիկ վիճակում և էվլոյուցիայի դինամիկայում, այնպես էլ տարրեր երկրների կամ դրանց խմբերի համեմարդական փոխհարաբերության մեջ: Վյո դեսանկյունից՝ դժվար թե զարգացումը երբևիցե լինի համաշափ: Սակայն անհամաշափության ասդիմանը կարող է հիմնախնդիր դառնալ: Ինքնին հասկանալի է, որ զարգացման «պրուները» համաշափ չեն բաշխվում և չեն էլ կարող համաշափ բաշխվել: Դրա հետ մեկտեղ, զարգացման ներքին դրամարանությունը ենթադրում է, որ թեկուզ համապատասխան չափերով տարրերակված, բայց զարգացման «պրուները» պեսք է հասանելի դառնան բռնորդին: Ենթաքար՝ տնտեսական զարգացման հիմքերից, ուղիներից և վերջնական արդյունքներից մեկը օրյեկտիվորեն պայմանավորված է հանրային կյանքի տարրեր բնագավառներում արդարության հասպահմամբ:

Զարգացման անհամաշափությունը ըստ երկրների դիվարկելիս կարող են բացահայփվել ու նկարագրվել զարգացման ձեռքբերումներ կամ ձախողումներ, որոնք նույնպես ինքնին անհամաշափ են: Այսպես՝ եթե երկիրը մյուսների համեմապությամբ առաջանցիկ գենմագերով դիմա-միկ զարգանում է, ապա կրծագվում է դրանց միջև խզվածքը՝ մոփեցնե-լով զարգացման մակարդակները: Որպես կանոն, այդպես գրելի է ունե-նում «հասնող» կամ «հետապնդող» զարգացման քաղաքականության հաջող իրականացման դեպքում, եթե երկիրը նաև կարողանում է իրաց-նել «ուշ եկամտերի» առավելությունը: Իսկ եթե երկիրը զարգանում է չա-փազանց դանդաղ կամ ձախողում է զարգացման նախագծերը, ապա դրա հետևանքով մեծանում են խզվածքը, անհամաշափության և հետապնդության ասդիճանը:

1.2

Պետքությունը և պարասիստանափու գարգացման մարդակրավերը

Պարասիստանափու գարգացման ընկալումը որպես մարդակրավեր վերաբերում է բոլոր գենակի սուրյեկտիվներին՝ անհափից մինչև մարդկություն: Այսպես այն հիմնականում կղիփարկենք պետքության մասշտաբով, քանի որ երկրի գարգացման նվաճումների կամ ձախողումների մեջ պետքության դերը հանգուցային է՝ դրական կամ բացասական: Դա պայմանավորված է պետքության առաջարկար մասնակցությամբ գարգացման գործընթացների կազմակերպմանը և պայմանների սրեղծմանը, ռազմավարության և քաղաքականության մշակմանը, ուղղորդմանը և իրազործմանը: Ներկայացները՝ պետքության այս կամ այն ազդեցությունը գարգացման բնութագրերի վրա կանխորոշող է:

Նորանկախ երկրի համար, առաջին հերթին, գարգացման հիմնարար նախադրյալ և նայրուղի է հենց պետքական հասպարությունների ձևավորումը և կայունացումը՝ պետքական շինարարությունը, ինքնիշխանության և անվտանգության ամրապնդումը, իրավական պետքության կայացումը: Դրանց միջոցով են սրեղծվում ու գործում պետքական, ազգային և հանրային եական շահերի իրացման մեխանիզմները, ապահովում դրստեսական գարգացման քաղաքական ու իրավական ամուր հիմքերը: Մյուս կողմից՝ այդ խնդրի լուծումը բարդ է, քանի որ ժամանակակից արդյունավետ պետքության նյութական հիմքերը, իրենց հերթին, պայմանավորված են դրստեսական գարգացմանք: Ուստի և արագավոր շրջանում ժայագրներու համար մնում է նշված երկու հիմնական գարգացումների համակցման գարբերակը՝ թեկուզ ասդիմանական, բայց՝ հետքետղական:

Այդ առումով գենագրործնական կարևոր նշանակություն ունի Դուգլաս Նորթի մոդելումը: Նա նշում է, որ հաջող գարգացման քաղաքականությունը ներառում է դրստեսական փոփոխության դինամիկայի ընկալումը, իսկ պետքական կառուցվածքների վերլուծությունը դրստեսական փոփոխության դինամիկ մոդելի էական մասն է, քանի որ դրանք են սահմանում և պարբարում պաշտոնական (ֆորմալ) կանոններ: Այսպիսի Նորթը փաստում է, որ այդպիսի մոդելը դեռևս հեռանկար է, նոր ինսպիրուցիոնալ դրստեսագիրության մեջ մշակվող կառուցվածքը դեռ ավարտուն չէ, այնուամենայնիվ, առաջարկում է արմագագես գարբեր գարգացման քաղաքականություն, քան ավանդական գարգացման դրստեսագիրները և նորդասական դրստեսագիրները: Նրա կարծիքով՝ գարգացման դրստեսագիրները հակված են պետքությունը մեխանիզմանելու որպես կամ եկամուտ, կամ բարերար սուրյեկտ գարգացման գործընթացում:

Նորդասական տնտեսագելքները լրելյայն ենթադրել են, որ ինսպիրուվուները (տնտեսական, քաղաքական) նշանակություն չունեն, և ալոկագիվ արդյունավելության մոդելներում մարմնավորված սփառիկ վերլուծությունը ուղեցույց պիզի լինի քաղաքականության համար, այսինքն՝ «հասնելու ճիշդ գներին»՝ վերացնելով փոխանակության և գնային վերահսկողությունները։ Նորթն իր եզրակացությունը ձևակերպում է հետևյալ հիմնադրույթով։ «Իրականում պետքությունը երբեք չի կարող մեկնարանվել որպես էկզոգեն սուբյեկտ զարգացման քաղաքականության մեջ, և ճիշդ գներին հասնելը ցանկալի հետևանքների է ունենում միայն եթե դուք արդեն փեղում ունեք սեփականության իրավունքների և դրանց կենսագործումը պարփակրելու համալիր, որոնք այնուհետև կապեղծեն մրցակցային շուկայի պայմաններ»¹¹։ Այսպիսով՝ պետքությունը զարգացմանն ակդրանություն մասնակցող անփոխարինելի սուբյեկտ է։ Եթե պետքությունը չի սպանձնում այդ հիմնարար գործառույթը կամ կարում է ոչ պարզած կերպով, ապա զարգացման ներուժը լիարժեք չի բացահայտվում ու հանրօգությունը իրացվում, մնում է փարերային ու բարձիթողի։ Այս դեպքում անխուսափելի է պարփականագործության, պնդեսական սուբյեկտների կամայական ինքնազործունեության և փոխհարարերությունների կարգավորման ոչ պաշտոնական կանոնների ու նորմերի փիրապերման մթնոլորդով։ Բազմայա փորձը հասպարում է, որ այդպիսի մթնոլորդում ոչ միայն անհնարին է կայուն զարգացում, այլև առաջանում են զարգացման փարաբռույթ խոչընդուներ՝ վերածվելով արգելակման մեխանիզմի։ Վերջինիս հետևանքն է հետամնացության, թերզարգացածության, այլասերման, սոցիալական քենոացման խորացումը։

Իսկ եթե պետքությունը սպանձնում է նշված գործառույթը և հետևողականորեն իրականացնում, ապա ամուր հիմք է դրվում պարփականագործության համար։ Պետքության այդօրինակ վարվելակերպի նշանակությունը չի սահմանափակվում սույլ պետքական հարվածով, այլ դրական արձագանք է արտանում զարգացմանը մասնակից սուբյեկտների ողջ շրջանակում։ Երկրի գնդեսական զարգացման իր սպանձնած պարփականագործության կարարմամբ պետքությունը նաև արփահայրում է թափանցիկ գործելու և հանրությանը հաջվելու լինելու պարփականամություն։ Թեև դրանք ինքնին չեն կարող փոխարինել զարգացման համարած արդյունքներին, այդուհանդերձ, էական են այնպիսի միջավայրի ծնավորման համար, որը նպաստում է նման արդյունքների ձեռքբերմանը։ Այդ առումով, արդիական է զարգացման քաղաքականու-

¹¹ North D., The New Institutional Economics and Development, p. 5. www.deu.edu.tr

թյունների կերպափոխումը՝ հաշվեպու լինելը և թափանցիկությունը դրանցում ներառելու համար: Դա շաղկապված է նաև համաշխարհային գարզացմանն առնչվող իիմնահարցերին, քանի որ զարգացած երկրները և միջազգային կազմակերպությունները վճռորոշ դեր ունեն պատասխանագրությունը զարգացմանը նպաստելու գործում:

Դիմնախնդիրները մնում են զուծված, իսկ նոր մարդարավերները գոյանում են նաև անցյալում անպատճախանագրու գործողություններից կամ անգործությունից: Չդիմագրավված մարդարավերների հետքագա վերադարձից խուսափելու լավագույն ուղին դրանք պատասխանագու ձևով դիմագրավելն է ներկայում: Ցավոք, առաջմ չի բացառվում անպատճախանագրությունը որոշումների ընդունման, ռեսուրսների ուղղորդման և զարգացմանն առնչվող այլ գործունեությունների մեջ:

Դաշվեպու լինելու կարևորությունը չնեմացնելու և, մանավանդ՝ դրա ձևական բնույթից խուսափելու իրական միջոցը համարժեք պատճախանագրության մեխանիզմն է՝ զարգացման նպատակները ձախողելու համար՝ սահմանելով և անխսիր կիրառելով դրա քաղաքական, իրավական, քարոյական մոփեցումները և չափանիշները: Նպատակահարմար է զարգացման այն ռազմավարության ըստրությունը, որը հիմնված է անհապական և սոցիալական արժեքների վրա և ապահովում է փոխհամաձայնություն հանրության մեջ: Զարգացման ռազմավարության իրականացման անհրաժեշտ նախադրյալը երկրի վերնախավի կողմից զարգացման պահանջմունքի լիակատար գիրակցումն է, ինչպես նաև զարգացման ներուժի ու պայմանների նպատակալաց ձևավորումը, համապատասխան դիրքորոշումը և քաղաքական կամքի հերքուողական գործադրումը: Դաշվեպու լինելու և թափանցիկության առավել նախընդունվելի գեսակները շաղկապված են զարգացման առաջիմական վերջնարդյունքներին, որոնք ակնառու և օգգավելու են բոլորի համար: Նոյնը ճշմարիկ է զարգացումը խոչընդուռող գործոնների և իրավիճակների հաղթահարման կամ նվազեցման առումով:

Պարասխանագրու զարգացման հրամայականով է անցած գուանամյակների ընթացքում զարգացման հայեցակարգային ըմբռնումը խորացել և ընդլայնվել: Դա արդացողություն է նշանակալից գեղաշարժով զարգացման՝ որպես գնդեսական աճի գույք գնդեսական մեխանիզմությունից դեպի դրա ավելի լայն իմաստավորումը, ներառյալ բազմաշերտ՝ սոցիալական, քաղաքական, ինսպիրուցիոնալ, մշակութային, հոգեբանական, վարքագծային և մյուս չափումները¹²: Զարգացման գնդեսագի-

¹² Տնտեսական ամեն աճ ինքնին դեռ չի նշանակում զարգացում, անբնդությի է զարգացման հանգեցումը սոսկ գնդեսական աճին: Համեմայնդեմպա, որակյալ գնդեսական աճը հանգեցնի է զարգացման հետ և շարունակում է մնալ դրա հնարավոր ձևերից մեկը: Վյսքեղ գնդեսական աճի ու

գության մեջ մշակվել ու հասդարվել են զարգացման այնպիսի հիմնարար հայեցակարգեր, ինչպիսիք են՝ հնարավորությունների ընդլայնումը, բևեռային անհավասարությունների չափավորումը, մարդկային ներուժի ձևավորումը, կափարելագործումը և իրացումը, ազագությունը, բարեկեցությունը: Տեսական այս արդյունքներով հանդերձ՝ գործնականում հետքամնացությունը, թերզարգացածությունը և զարգացումը գոյակցում են աշխարհում: Այս իմաստով, զարգացումը պետք է զնահավաքի նաև որպես հետքամնացության հաղթահարում և թերզարգացածության կրծագում: Հարուստ և աղքադ երկրների միջև մեծացող ճեղքվածքը ամհամապեղելի է զարգացման ներքին իմաստի հետք: Դեպինարար՝ ծայրահեղ անհավասար վիճակների փարբերության կրծագումը համաշխարհային զարգացման առաջնահերթություններից մեկն է: Դա պահանջում է թույլ զարգացած երկրներում սոցիալ-դժունական վարչար իրադրության անհապաղ բարեկավում:

Հարուստ և աղքադ երկրների միջև խզման ընդլայնումն արգելակում է համաշխարհային (գլոբալ) զարգացումը: Աշխարհում սպեղծվում է չափազանց անհավասարակշիռ իրավիճակ, ինչը կայուն զարգացման համար կենսունակ միջավայր լինել չի կարող: Թեպետք ակնառու են նյութական քաղաքակրթության աննախադեպ ձեռքբերումները՝ մարդկությունը մինչև այժմ չի լուծել բոլորի համար հանապազօրյա հացի խնդիրը: Աշխարհում հարյուր միլիոնավոր մարդիկ, ներառյալ երեխաներ, ყառապում են քաղցից կամ թերսնումից, ինչը սննդամթերքի պակասի հետինքը չէ: Դաշվի առնելով գննիւթյան շաբ պարզ, բայց հիմնարար գործառույթը՝ ապահովելու արժանավայել ապրուսփի միջոցներ, կարող ենք եզրակացնել, որ համաշխարհային գննիւթյունը չի կապարում այդ առաջադրանքը: Պարասխանապու զարգացման պահանջով, վերջին շրջանում, կենսական բարիքների գոնե նվազագույն չափորոշիչներով համընդիմանական ապահովման մովեցումը կիրառվում է հազարամյակի զարգացման նպարակները սահմանելիս: Որպես ամփոփում՝ հարկ է պարզած կարևորել առհասարակ զարգացման հումանիտարիան ուղղվածությունը, զարգացած երկրների գրամադրած պաշտոնական օգնության ծավալի մեծացումը և դրա նպարակային օգբագործման մեխանիզմների երաշխավորումը:

զարգացման փոխարարերությունն առանձին չի քննարկվի: Դրան, ինչպես նաև շաղկապված հիմնահարցերին ավելի հանգանանորեն անդրադարձել ենք «Տնտեսական աճի որակական բնութագրելու զարգացման համագելքում» հոդվածում /«Բանբեր ՇՊԸ», 2013, (3) էջ 7-24/:

1.3

Մեթոդաբանական մովեցումները զարգացման ուսումնասիրություններում

Զարգացումը բազմաշերտ գործընթաց է, որում առկա հիմնախնդիրներն օրգանապես միահյուսված են փոխայմանավորվածության բարդ կապերով: Այս իրողությունը մեթոդաբանական գրեսակեփից ենթադրում է համարիր բնույթի մովեցումների կիրառում: Ամենից առաջ, դա վերաբերում է գնդեսական զարգացման գեղին ու դերին ընդհանուր զարգացման համապերսպում: Տվյալ հարցի պարզաբանումը նպագակահարմար է սկսել գնդեսական և ոչ գնդեսական բազմապիսի գործուների փոխարքության քննարկումից: Ուղեցույց կարող է լինել Շումակերի դիրքորոշումը՝ «Այս կամ այն փասքը երբեք բացառապես կամ «զուր» գնդեսական չէ, եթե հաշվի առնենք դրա խորքային պարճառները. մշտապես գոյություն ունեն նաև դրա ուրիշ, հաճախ ավելի կարևոր կողմեր»¹³: Այնուհետև նա կարարում է հետևյալ ընդհանրացումը. «Այնպես, ինչպես գնդեսական փասքերի մասին ընդհանրապես, մենք խոսում ենք նաև գնդեսական զարգացման մասին, որը բացադրելը մեր նպագակն է»¹⁴:

Տնդեսական զարգացման գեղի ու դերի վերաբերյալ կարելի է առանձնացնել սկզբունքորեն փարբեր երկու ընկալում: Հար առաջինի՝ գնդեսական զարգացումը գերակա է հասարակական կյանքի բոլոր մյուս ոլորտների նկազմամբ¹⁵: Գործնականում դա արդահայփվում է նյութապաշտական արժեքների արմադրավորմամբ, հարստություն կուտակելու մոլուցքով, սպառողական հոգեբանության լայն փարածմամբ, ծայրահետ դեպքերում՝ նաև գնդեսության զգալի մասի սրվերային բնույթով, կոռուպցիայի պարբերական դրսևորումներով, պարեհապաշտական վարքի ծավալումով, անբարեխիղճ մրցակցությամբ, բնական ռեսուրսների գիշագրչական շահագործումով, սոցիալական չափազանց շերտավորումով և այլն: Փաստացի ընթացքին հիմնականում բնորոշ են այս կարգի դրսևորումները, ինչը խաթարում է ինչպես զարգացման մյուս գիշագրչական և ուղղությունները, այնպես էլ հենց գնդեսական զարգացումը: Այս դեպքում գնդեսականն արդամնում է կյանքի մյուս կողմերը

¹³ Ռումիլեր Յ., Տеория экономического развития. М., „Прогресс”, 1982, с. 57.

¹⁴ Նոյն գլուխում, էջ 58:

¹⁵ Տվյալ ընկալմամբ չեն վերաբերում այն իրավիճակները, երբ զանգվածաբար նույնիսկ նվազագույն անհրաժեշտ ապրուսքի հայթայթումը դաշնում է գոյագնման բարդ խնդիր: Այդ դեպքում մարդիկ ավամա իրենց ջանքերն ու կենսաժամանակը հիմնավանում դրամադրում են հիմնարար կարիքները հոգացուն: Իրականում նման վիճակը ոչ միայն որևէ ընդհանրություն չունի զարգացման հետ, այլև վկայում է զարգացման լուրջ խոչընդունի մասին, որի առկայությունը նշանակում է հերթմանաց և դրա կոնսերվացում:

և փորձում փոխարինել դրանց: Հաճախ այդ կողմերը պարզապես ծառայեցվում են տնտեսականին, երբեմն էլ՝ գոհարերվում դրան:

Տնտեսական զարգացման նշան չի կարող հեռանկարային համարվել որևէ երկրի ու հանրության երկարաժամկետ, կենսունակ զարգացումն ապահովելու դրանքունից՝ գիտակցվում և ընդունվու՞ն է դա, թե՞ ոչ: Համենայնդեպս, նորմատիվային իմաստով նախընդրելի է տնտեսական զարգացման դեղի և դերի հետևյալ ընկալումը, որի անհրաժեշտությունն ավելի քան հասունացել է: Ըստ այդ ընկալման՝ դրանքուն զարգացումը որքան է կարևոր, սակայն բոլոր դեպքերում ընդամենը միջոց է, իսկ վերջնանպարակները դրանքունի համենապությամբ ավելի բարձրակարգ են և, ըստ եռության, արդարին՝ բուն դրանքուն համակարգի համար: Ընդհանուր առմամբ, խոսքը մարդկային զարգացման մասին է՝ որպես զարգացումն իմաստավորող ամփոփ հայեցակարգի: Դրան առանձին կանոնադրադառնանք քիչ անց, այսպես միայն ընդգծենք, որ վերջին մի քանի տասնամյակում զարգացման վերաբերյալ դրանքուն մեկնաբանություններում ակնառու է մարդկային զարգացման ուղենիշի կարևորումը: Դա արդահայտված է զարգացման՝ որպես ազագր ընդության շրջանակի ընդլայնման, մարդկային ներուժի իրացնան, սոցիալական դիրույթում՝ բարեկեցության աճի, անհավասարության և աղքաբության կրծագման, գրադարձության բարեկալման հայեցակարգային մշակումներում և, ամփոփ ձևով, մարդկային զարգացման ցուցիչների ու համապարասխան հաշվետվությունների մեջ:

Տնտեսական զարգացման դեղի ու դերի գարագեսակ երկու ընկալումները, ըստ եռության, էկզիստենցիալ պակլերացումներ են: Անկախ սոցիալգնդրեական կարգավիճակից՝ բոլոր մարդիկ ունեն դրանցից մեկին կամ մյուսին համապարասխանող առօրյա կենսափիլիստիկայություն: Վյահնքն՝ առկա է էկզիստենցիալ երկընդրանք, ըստ որի հանրության մեջ կողմնորոշվածների հարաբերակցությունը զգալի ազդեցություն է թողնում զարգացման ընթացքի փաստացի ուղղվածության և արդյունքների բնույթի վրա: Իսկ դվյալ հարցում վճռորոշը նշան հարաբերակցությունն է՝ գարբեր մակարդակներում որոշում կայացնողների շերտում: Դա նաև նշանակում է, որ զարգացման մեջ հնարավոր բեկումը պահանջում է էկզիստենցիալ ընկալումների համապարասխան դեղաբարձրությունը:

Զարգացման բազմակողմանի բնույթը անհրաժեշտ է դարձել նաև դրա ուսումնասիրություններում միջզիգակարգային մոդելումը և համագործակցությունը: Դրա գիտակցման և հսկակ ձևակերպման նմուշունակ է Զոն Միլի միքը. «Զարգացման բարձրությունն իր գործնական կիրառումներում անխցիկորեն միահյուսվում է սոցիալական փիլիսոփայությունը»:

թյան ուրիշ շաբ ճյուղերի հետ: Եթե չհաշվենք խիստ մասնակի հիմնախնդիրները, ապա հազիվ թե կզբնվեն գործնական հարցեր, իրենց բնույթով նույնիսկ ամենից ավելի մոր կանգնած զուր գնդեսական հարցերին, որոնք կարելի է լուծել՝ հիմնվելով միայն գնդեսական նախադրյալների վրա»¹⁶: Արդի պայմաններում նման համագործակցություն ծավալվում է, մի կողմից՝ գնդեսագիրության ներքին գիրույթում, որին մասնակցում են զարգացման գնդեսագիրությունը, գնդեսական պարմությունը, քաղաքագունդեսությունը, եվոլյուցիոն գնդեսագիրությունը, նոր ինսպիրուցիոնալ գնդեսագիրությունը, համեմադրական գնդեսագիրությունը, սոցիալ-գնդեսական վիճակագրությունը, գնդեսական ժողովրդագրությունը և այլն, մյուս կողմից՝ հասարակական և հումանիտար գիրությունների ընդհանուր գիրույթում:

Զարգացման գնդեսագիրության մեթոդաբանական մոդելցումների առումով հիշարժան է Մայքլ Թոդարոյի դիրքորոշումը: «Տնդեսական զարգացում» գրքի նախաբանում այդ ուղղության փորձառու գնդեսագետը ծևակերպում է իր մոդելցման նորույթները, որոնք պարունակում են նաև դասավանդման մեթոդիկայի փարբեր: Վռանձնացնենք այն հիմնական կեփերը, որոնք արդացողում են զարգացման հետազորությունների մեթոդաբանությունը¹⁷:

- Տնդեսական զարգացման ուսումնասիրություն՝ հիմնախնդիրների գիշավոր շրջանակի համագերասպում, ինչպիսիք են՝ աղքագությունը, անհավասարությունը, գործազրկությունը, բնակչության աճը, բնամիջավայրային քայլայումը և ծայրամասային լճացումը (սկագնացիան):
- Շիմնախնդիրներին ու քաղաքականությանը կողմնորոշված մոդելցման ընդունում՝ խրախուսելու երրորդ աշխարհի երկրների գնդեսական խնդիրների ըմբռնումը և հասնելու դրանց հնարավոր հանգուցալուծման անկախ և իրազեկ դարպողությունների, ինչպես նաև քաղաքականության վերաբերյալ հետքեռությունների:
- Համակարգային մոդելցման կիրառում, ինչը հավելապես կարևոր է հետքեռության առաջնային ամեն մի հիմնախնդիրի ընդհանուր բնույթի, գիշավոր հարցերի և փարբեր երկրներում դրսուրման ծևերի հավասփի շարադրանք, հիմնական նպարակների և հնարավոր թիրախների, հիմնախնդիրի պարզաբանման մեջ գնդեսագիրական վերլուծության դերի, ինչպես նաև քաղաքականության հնարավոր այլընդունակների ու դրանց հավանական հետքեռությունների պարզաբանում:

¹⁶ Միլլ Ջ., Основы политической экономии. М., т. 1, „Прогресс”, 1980, с. 76.

¹⁷ Stiu Todaro M. Economic Development. Addison-Wesley Publishing Company, 1996, 6th ed.

- Ըստ հիմնախնդիրների ծավալի և կարևորության՝ դարբեր երկրների միջև առանձնահարկությունների և ընդհանրությունների բացահայտում:
- Կենքրոնացում զարգացող երկրների վրա՝ ոչ միայն որպես անկախ պետությունների լայն շրջանակի, այլև միջյանց նկարմամբ դրանց փոխհարաբերության և համաշխարհային գնդեսությունում հարուստ երկրների հետ փոխազդակցության մեջ:
- Զարգացման և թերզարգացման հիմնախնդիրները ինսպիրուցիոնալ և կառուցվածքային (ոչ գնդեսական), ինչպես նաև գնդեսական հայեցակերպից մեկնաբանելու անհրաժեշտության ընդունում՝ հանրահայք ընդհանուր գնդեսագիրական սկզբունքների, գնդեսությունների և քաղաքականությունների համապարավսան կերպափոխումով: Դրանով փորձ է արփում միավորելու ռելևանտ գնդեսությունը իրավեսական ինսպիրուցիոնալ վերլուծություններին:
- Զարգացման և թերզարգացման դիպարկում թե՛ հայրենական, թե՛ միջազգային համապերարկում՝ շեշտելով աճող փոխախիվածությունը համաշխարհային գնդեսության այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են պարենը, էներգիան, բնական ռեսուրսները, գնդեսությունների և ֆինանսական հոսքերը:
- Թերզարգացման գնդեսական, սոցիալական և ինսպիրուցիոնալ մեծաթիվ՝ որպես սերպորեն շաղկապված, հիմնախնդիրների քննարկումը, ինչը պահանջում է համաժամանակյա և համաձայնեցված մոդեցումներ դրանց լուծմանը:

Վյախիսով՝ այս մոդեցումների համարի գործադրումը երաշխավորում է զարգացման հետքառփությունների համակողմանի և խորքային բնույթը: Տարկ է նաև նշել, որ դրանք մշակված և հարմարեցված են զարգացող երկրների համար: Տարկանշական է, որ Մ. Թողարոյի համոգմամբ՝ զարգացման գնդեսագիրությունը նույնը չէ, ինչ զարգացած կապիտալիստական երկրների գնդեսագիրությունը (արդի «նորդասական» գնդեսագիրությունը)¹⁸: Ըստ որում, Նյու-Յորքի համալսարանի ճանաչված պրոֆեսորը, թերևս, քննադարպական ենթաքեթսպով է նշում, որ ավանդական նորդասական գնդեսագիրությունը «ընդունում է գնդեսական «ռազմականացությունը» և գնդեսական որոշումների կայացման գույք մագերիալիստական, անհարապաշտական, էգոիստական կողմնորոշումը»¹⁹:

¹⁸ Տե՛ս նոյն գեղը, էջ 7:

¹⁹ Նոյն գեղում:

1.4

Տնտեսական զարգացման հիմնական բնույթագրերը և ուղղությունները

Ելնելով ռեսուրսների սահմանափակությունից՝ դնդանական քարեաջող զարգացման անհրաժեշտ արդահայքություն է դառնում դրա արդյունավետության բարելավումը՝ դրա բոլոր հիմնական դրսնորումներով՝ գեղարաշխման, գեխնիկապնդեսական, սոցիալբնդեսական, սոցիալական: Եթե արդյունավետության բարձրացում գեղի չի ունենում, ապա այնքան էլ գեղին չէ խոսել սոցիալբնդեսական զարգացման մասին: Տնտեսական էվոլյուցիայի վեկտորային ուղղվածությունը դրվում է օգդագործման դարբեր այլընդունելու միջև առկա ռեսուրսների գեղարաշխումով: Այս հարցում վճռորոշ է առաջնահերթությունների ճիշգր սահմանումը՝ հիմնվելով հանրության կենսականորեն կարևոր պահանջմունքների գերադասման վրա:

Տնտեսական զարգացումը վերաբերում է նաև ռեսուրսների սահմանափակության բնույթի, դրսնորման ձևերի ու չափերի փոփոխությանը: Որքան էլ ռեսուրսների սահմանափակությունը, ընդհանուր առմամբ, օբյեկտիվ իրողություն է, այդուհանդերձ, քարացած չի մնում և ենթակա է փոփոխությունների: Այդ առումով, զարգացումը նշանակում է ռեսուրսների սահմանափակության ասփիճանի նվազում, այդ թվում՝ նոր ռեսուրսների կամ դրանց օգդագործման նոր եղանակների հայդնաբերմամբ: Այլ խոսքով՝ դնդանական զարգացումը ռեսուրսների սահմանափակությունը հաղթահարելու հնարավորությունների բացահայքման և արդյունավետ իրացման գործընթաց է:

Ռեսուրսների սահմանափակության ասփիճանը նվազեցնելու հնարավոր միջոց է պահանջմունքների խելամփր սահմանափակումը: Թեև պահանջմունքների անսահմանափակությունը, որպես արդի դնդանագիտության ելակեպային սկզբունք, հիմնարար է մեյնաթրիմի մեջ, այդուհանդերձ, դրա քննական վերանայումը և իրագործումը կարող են համարվել զարգացման կարևոր դրսնորում: Ինարկե, դա չափազանց բարդ խնդիր է: Դեռևս հին աշխարհում այս իրողությանը քաջադրելոյակ էին: Բավական է իշխել Պլուտարքոսին. «Զէ՞ որ անհրաժեշտի պահանջմունքի հետք միասին և դրա հետքից գալիս է հավելուրդայինի ծարավը»²⁰: «Արծաթասիրության մասին» պրակտագում հոյս մբածողը նշում է՝ «ավելորդ բաներ ունենալը չի վերացնում ավելորդ բաների կարիքը»²¹, ապա՝ նաև ախսպորոշում այդ երևույթը որպես «....անհագություն և արծաթասի-

²⁰ Պլուտարքոս, Երկեր, Եր., «Հայասպան», 1988, Էջ 431:
²¹ Նոյն գեղում, Էջ 561:

բություն, որ ծագել է խոփելի ու բանականությանը հակառակ դադողությունից: Եթե մարդ դրան դուրս չնեփի, ինչպես երիզորդին, ապա չի դադարի ավելորդ բաների կարիք զգալ, այսինքն՝ ցանկանալ այն, ինչի կարիք չի զգում»²²: Պլուտարքոսի ախտորոշումը արդիական է նաև ներկայումս, թեպես նրա առաջարկած բուժման միջոցի գիրակցված կիրառման առումով առանձնակի առաջընթաց չի արձանագրվել:

Վյայես՝ ավելի քան երկու հազար տարի անց նմանապիս իրավիճակ է նկարագրում ժամանակակից ամերիկացի փնտեսագետը Դելոնզը: Նշելով, որ Հյուսիս-արևածագյան տարածաշրջանում գրեթե ամեն ոք արդեն ունի բավականաչափ սնունդ, հագուստ, բնակարան, նաև շարունակում է. «Մինչդեռ մենք ցանկանում ենք ավելին, վրդովկում ենք, երբ չենք հասնում դրան և բավականաչափ ինքնագիրակից ենք՝ իմանալու համար, որ պերճանքի առարկաները դառնում են հարմարություններ, իսկ հետո՝ անհրաժեշտ կարիքներ, ինչպես նաև՝ որ մենք շատ ճարպար ենք նոր պերճանքի առարկաների հայտնագործման մեջ՝ ջանալով հասնելու դրանց»²³: Քննարկվող հարցում անվերապահ դարգությունները գեղին չեն, քանի որ այսպես առկա են միահյուսված շերպեր, ուստի պահանջվում է դարբերակված մոդեցում:

Զարգացումն ուղեկցվում է նոր պահանջմունքների ձևավորմամբ, դրանց բազմազանության մեծացմամբ: Անշուշտ, դա դեռևս չի նշանակում, որ ամեն մի նոր պահանջմունք, դրա բավարարման միջոց կամ եղանակ զարգացման վկայություն են: Սակայն զարգացման ներքին դրամաբանությանն առավելապես հակասում է առկա պահանջմունքների չափից ավելի բավարարումը՝ ներառյալ դրա խեղաթյուրված ձևերի գործադրումը: Ներևաբար՝ առողջ զարգացման դեսանլյունից հիմնարար նախադրյալ է «անսահմանափակ» պահանջմունքների խեղամիք չափավորումը՝ դրանց կազմի, կառուցվածքի, բավարարման բնականոն ձևերի ու անհրաժեշտ մեծության առումով: Դրան հասնելու անմիջական ուղին անհափի գիրակցված ու կամավոր ինքնասահմանափակումն է (սա, իր հերթին, լիարժեք հասուն մարդու ինքնազարգացումն է), ինչպես նաև անուղղակի գարբեկ ձևերով հանրային սահմանափակումները: Նակառակ դեպքում, անսահմանափակ պահանջմունքների գերբավարման համար անհմասպ վարնվում են արժեքավոր սակավ ռեսուրսները՝ չդառնալով իրական զարգացման խնդիրները լուծելու միջոց, ինչպես նաև պաֆճառելով անհեփաճգելի կարիքների թերբավարում:

Վյայիսով՝ զարգացման համարեքսպում կարևորվում է սպառման մշակույթի կարարելագործումը՝ դրա կարգավորիչ գործառույթների ընդ-

²² Նոյն գեղրում, էջ 563:

²³ Bradford DeLong J., Inequality on the Horizon of Need. www.project-syndicate.org. May 30, 2013.

լայնմամբ: Նման ընկալման խորապավկերում ցուցադրական սպառումը դառնում է զարգացմանը հակասող պարզունակ մի երևոյթ, որով անհաջող փորձ է արվում քողարկելու մարդկային հասունացման հետամնացությունը: Տվյալ հեփսությունը վերաբերում է նաև միջոցների ինքնանպատկան մասմանը, անխոհեմ շռայլմանը, ազահությանը, ժապությանը և այլն: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ զարգացումը, մի կողմից՝ մարդկային արժանիքների, դրական կողմերի քաջակերման, հեթևողական մշակման ու ամրապնդման, սոցիալական գնահարման և ժառանգորդման, իսկ մյուս կողմից՝ մարդկային արագների, բացասական կողմերի հաղթահարման, ճնշման գործընթաց է:

Պահանջմունքների ու ռեսուրսների փոխհարաբերության գրեսանկյունից՝ զարգացումը դիմում է որպես դրանց համակարգման՝ փոխհամաձայնեցման, համապատասխանեցման բարելավում: Բացի կապարված անդրադարձերից՝ խիստ կարևոր է նաև առկա ռեսուրսների օգտագործման չափի հաշվառումը: Տաճախ գոյակցում են ռեսուրսների սակավությունը և դրանց թերի, սխալ կամ անարդյունավետ օգտագործումը: Վյդ առումով վնասական զարգացումը ենթադրում է անշեղ գեղաշարժ դեպի առկա ռեսուրսների լրիվ և արդյունավետ գործադրում: Ասկածը վերաբերում է հարգկապես մարդկային ռեսուրսներին. ըստ այդմ՝ վնասական զարգացումը գործազրկության հեփսողական կրծագման, բարձր և կայուն զբաղվածության ակդիվ քաղաքականության հաջող իրականացումն է:

Տնտեսական զարգացման համար առանցքային նշանակություն ունի քաղաքակիրթ ձեռնարկագրիրական գործունեությունը: Գործառական (Փունկցիոնալ) առումով դա, ըստ Էության, վնասական զարգացման հիմնական շարժիչ ուժն է: Ենքնաբար՝ վճռորոշ են դառնում ձեռնարկագրիրական ընդունակությունների պարշաճ ձևավորումը, դրանց դրսևորման ու իրականացման մրցակցային պայմանների սրեղծումը, հակամքցակցային միջնուրուրի բացառումը, ներդրումային ակրիվության խթանների ապահովումը և, առհասարակ, բարենպաստ ինսպիրուցիոնալ միջավայրի երաշխավորումը:

Տնտեսական զարգացման՝ որպես դիմամիկ փոփոխությունների կապարման մեջ Շումանկերը կարևորում էր արդարության միջոցների նոր համակցությունների դերը: Նա բնորոշ էր համարում, որ դրանք կարող են առաջանալ (կամ առաջանում են) միայն դիմումուն առաջանակությունը գրվում են «նոր համակցությունների իրականացում» հասկացու-

թյամբ²⁴: Իհարկե, նման ընդհանրացման նպագրակը նոր համակցությունների վճռորոշ դերի շեշտադրումն է: Խսկապես, առանց դրանց պարզապես անհնարին կդառնա գրնժեսական զարգացումը: Մյուս կողմից՝ կարիք չկա բացարձակացնելու նշված դրույթը: Կափարենք որոշ վերապահումներ. նախ՝ դա ուղղակիորեն վերաբերում է գրնժեսական զարգացմանը, ուստի դժվար է դարածել ընդհանուր զարգացման վրա, որն անհամեմապ ավելի շատ վեկփորներ ունի և չի կարող հանգեցվել նոր համակցությունների: Բացի դրանից, նոր համակցություններն ինքնին չեն երաշխավորում զարգացում բովանդակային իմաստով՝ թեկուզ նկապի ունենալով դրանց անհաջողության դեպքերը: Վյուհեփու՝ նույնիսկ հաջողված նորամուծությունների պարագայում չեն կարող բացառվել դրանց բովանդակության ու ձևի միջև հակասությունները կամ անհամապարասխանությունը: Վերջապես՝ «զարգացում» կարող է նշանակել ոչ միայն արդարության միջոցների նոր կոմբինացիա, այլև դրան մասնակցող դարրեր սուբյեկտների ու իրային գործոնների առանձինառանձին նորացում՝ բարելավում, կափարելագործում, արդիականացում, ինչպես նաև հաջողված ինսփրուցիոնալ նորամուծություններ:

Չեռնարկագիրոջ կարգավիճակը Շումագեփերը միարժեքորեն վերագրում էր նորարարներին. «Չեռնարկագերեր մենք անվանում ենք գնդեսական սուբյեկտներին, որոնց գործառույթը հենց նոր համակցությունների իրականացումն է, և որոնք համդես են զայիս որպես դրա ակփիվ դարր»²⁵: Վյափիսով՝ գրնժեսական զարգացման մեջ հանգուցային նշանակություն ունեն գիփությունը և դրա արդյունքները կիրառող նորարարական զարգացումը: Գործնական առումով դա ծանրակշիռ ակնարկ է այն մասին, որ զարգացման բաղաքականության մեջ հիմնարար դեղ պեփք է ունենա նորամուծության առաջնահերթությունը:

Աղբեջանում և Ղրղզստանում չափագանց մեծ է հիմնարար հետազոտությունների ծախսերի ֆինանսավորմանն ուղղված մասնաբաժինը, որոնք բաց են ամբողջ աշխարհի համար և «առևսպրային Էֆեկտ» չեն

⁵¹ Կազմված է մեր կողմից ԱՊՀ անդամ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների գլուխանությունը:

հետապնդում: Աղբբեջանում և Հայաստանում բավական փոքր է մշակումների ֆինանսավորման գուսակարար կշիռը գիտագիտական աշխատանքներում, սակայն, ի վարբերություն Աղբբեջանի, որդեռ 2012 թ. էական փոփոխություն չի արձանագրվել 2011 թ. նկարմամբ, Հայաստանի Հանրապետությունում 2012 թ. ցուցանիշը կրրուկ աճ է արձանագրել՝ 8-ից հասնելով 52%-ի (զծապարկեր 2): Կիրառական հետազոտությունների ֆինանսավորման գծով առաջարար են Ղազախստանն ու Մոլդովան, իսկ մշակումների գծով՝ Ռուսաստանի Դաշնությունը:



Զծապարկեր 2

ՀՀ-ում գիտական հետազոտություններին և մշակումներին հավաքագված ծախսերի բաշխումը ըստ գիտահետազոտական գործունեության ուղղությունների, %-ով ծախսերի ընդհանուր ծավալի նկարմամբ 2011–2012 թթ.⁵²

Դա շար բանով պայմանավորված է ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքով (աղյուսակ 3): Համեմատաբար ցածր է բյուջեփային ֆինանսավորման մասնաբաժինը հետազոտությունների և մշակումների վրա կարարված ընդհանուր ծախսերի մեջ Ռուսաստանում, Ղազախստանում և Ուկրաինայում: Վրաբարյուջեփային միջոցներից գիտության ֆինանսավորումը բավական ցածր է հետազոտվող բոլոր երկրներում: Ցածր է նաև օգարերկրյա աղբյուրներից սպացվող ֆինանսավական միջոցների մասնաբաժինը ծախսերի ընդհանուր կառուցվածքում: Պարբերապես միջոցներից ֆինանսավորման ցուցանիշները նույնպես բավարար չեն, ինչը հանգեցնում է միջոցների անարդյունավետ և առանց վերահսկողության վարժնմանը:


⁵² Կազմված է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

Աղյուսակ 3

**Գիրական հետազոտությունների և մշակումների վրա կապարված
ծախսերը՝ ըստ դրանց ֆինանսավորման աղբյուրների, %-ով**

<i>h/ h</i>	Երկիրը	Տարե- թիվը	Բյուջե- տային- միջոց- ներ	Արդա- րյուջե- տային- միջոցներ	Սևփա- կան միջոց- ներ	Պարավի- րաբուի միջոց- ներ	Օգար- երկրյա- աղբ- յուրներ	Այլ աղբ- յուրներ
1.	Աղբեցան	2011	90	1	6	3	-	-
		2012	89	2	4	5	-	-
2.	Բելառուս	2011	64	4	10	7	7	8
		2012	67	3	11	5	7	7
3.	Հայաստան	2011	65	-	2	31	1	1
		2012	69	-	3	25	2	1
4.	Ղազախստան	2011	56	2	40	1	1	5
		2012	57	2	39	1	1	-
5.	Ղրղզստան	2011	62	5	15	14	3	1
		2012	60	5	16	10	7	2
6.	Մոլդովա	2011	70	1	8	20	1	-
		2012	72	1	7	15	4	1
7.	Ուստաստան	2011	51	2	7	33	5	4
		2012	51	2	7	32	4	4
8.	Ուկրաինա	2011	53	1	-	45	1	-
		2012	64	2	-	25	9	-

Ի դեպ, Հայաստանում նույնպես այդ ցուցանիշը դրսնորել է նվազ-ման միտքում՝ 2012 թ. 2011-ի համեմատությամբ նվազել է 6 դոկուսային կենով։ Օպարերկրյա ներդրողները գերադասում են ֆինանսավորել առևտրաֆինանսական գործառնությունները և հումքային ճյուղերը, այլ ոչ թե հնարավոր մրցակիցներին։ Միայն Բելառուսում, Ղրղզստանում և Ուկրաինայում օպարերկրյա ֆինանսավորման աղբյուրները համեմատաբար բարձր են։ Հայաստանի Հանրապետությունում, կարծեք թե, որոշակի դրական գենմագեր են նկարվում այս առումով, սակայն դրանք դեռ բավարար մակարդակի չեն (գծապարկեր 3):



Գ-ծավալուկեր 3

ՀՀ-ում գիրական հետազոտությունների և մշակումների վրա ծախսերը ըստ՝ դրանց ֆինանսավորման աղբյուրների,
%-ով 2011–2012 թթ.⁵³

ԱՊԴ երկրները սարքավորումների ձեռքբերմանն ուղղում են հետազոտություններին ու մշակումներին հարկացվող ծախսերի ընդամենը 1–7%-ը (աղյուսակ 4), ի դեպք, Հայաստանի Հանրապետությունում 2012 թ. այն ունեցել է նվազման միջում 2011 թ. համեմատաբար (գծապատճեն 4):


Աղյուսակ 4

Սարքավորումների ձեռքբերմանն ուղղված ծախսերը, %-ով գիրական հետազոտություններին և մշակումներին ուղղված ծախսերի նկատմամբ, առանց ամորտիֆացիայի

հ/հ	Երկիր	2011 թ.	2012 թ.
1.	Ադրբեյչան	6.4	4.4
2.	Բելառուս	2.3	1.3
3.	Հայաստան	3.3	2.7
4.	Ղազախստան	12.5	13.4
5.	Ղրղզստան	5.7	7.0
6.	Մոլդովա	4.0	4.1
7.	Լուսաստան	4.9	5.0
8.	Ռուսաստան	3.1	2.2

⁵³ Կազմված է մեր կողմից ԱՊԴ անդամ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների գլուխների հիման վրա:


Նման պայմաններում գիրական նոր արդյունքներ և մրցունակ փեխնողականներ դժվար թե ի հայր գան:



Գ-ծառապելիք 4

Սարքավորումների ձեռքբերմանն ուղղված ծախսերը, %-ով գիրական հետազոտություններին և մշակումներին ուղղված ծախսերի նկազմամբ, առանց ամորտիֆացիայի⁵⁴ %-ով 2011–2012 թթ.⁵⁵

ԱՊԴ երկրների հետազոտությունների մեջ մասը կենդրոնացված է Շուտականի Դաշնությունում (գծապարկեր 5):



Գ-ծառապելիք 5

Գիրական հետազոտություններ և մշակումներ կարող կազմակերպությունների աշխատողների քանակը (մարդ)⁵⁶

⁵⁴ Կազմված է մեր կողմից ԱՊԴ անդամ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների վկաների հիման վրա: Կազմված է ըստ նույն աղբյուրի:

⁵⁵ Կազմված է ըստ նույն աղբյուրի:

Դա նշանակում է, որ ԱՊԴ երկրների՝ ինովացիոն գնայիտական անցման գիրական հենքը կարող է լինել միայն համագործակցության նրանք հավերժ կմնան որպես հետխնդուագրիալ աշխարհի «հումքային կրիչներ»։ Վերջին տարիներին գիրական հետազոտություններ և մշակումներ կարարող աշխատողների թվաքանակը ունեցել է նվազման միգում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում, Բելառուսում, Ղրղզստանում, Մոլդովայում, Ռուսաստանում և Ուկրաինայում, իսկ, օրինակ, Ադրբեյջանն ու Ղազախստանը այդ ցուցանիշի գծով դրսերել են աճի միգում։ 2012 թ. 2011-ի համեմագործամբ այդ երկրների գիրական հետազոտություններ և մշակումներ կարարող աշխատողների թվաքանակը ավելացել է համապատասխանաբար 2886 և 2401 աշխատողով (աղյուսակ 5):

Գիրական հետազոտություններ և մշակումներ կարարող կազմակերպությունների աշխատողների քանակը (մարդ)					Աղյուսակ 5
---	--	--	--	--	-------------------

հ/հ	Երկիրը	Տարե-թիվը	Ընդա-մենք	Այդ թվում		
				Տարագույքողներ և դեխնիկներ	Օժանդակ անձնակազմ	Այլ անձնակազմ
1.	Ադրբեյջան	2011	18687	10229	5450	3008
		2012	21573	10217	7650	3706
2.	Բելառուս	2011	31194	19668	7200	4326
		2012	30437	19315	7240	3882
3.	Հայաստան	2011	5718	4748	566	404
		2012	5598	4421	556	621
4.	Ղազախստան	2011	18003	10444	4236	3323
		2012	20404	13205	4250	2949
5.	Ղրղզստան	2011	3333	2490	411	432
		2012	3236	2597	369	298
6.	Մոլդովա	2011	5114	3654	809	753
		2012	5121	3609	778	734
7.	Ռուսաստան	2011	735273	436353	178449	120471
		2012	726318	431525	175790	119003
8.	Ուկրաինա	2011	134741	84969	24779	24993
		2012	129945	82032	23866	24047

Ի դեպքում, որ ԱՄՆ-ում, օրինակ, ամեն մի հետազոտողի հասնում է մինչև անգամ դասմայական նորարարական մենեջերներ, որոնք գրադարձությունների մեջ պատճենահանում են գիրական հետազոտության մշակումների առևտությունները՝ ԱՊԴ

⁵⁶ Կազմված է մեր կողմից ԱՊԴ անդամ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների գովազդության վեհական վրա:

Երկրներում նորարարական ենթակառուցվածք դեռևս չի ձևավորվել: Մինչ օրս հայրենական բուհերի լավագույն շրջանավարտները մեկնում են արդասահման, իսկ դրանից բխող բացասական հետևանքները մեր երկրի համար, կարծում ենք, քննարկման կարիք իսկ չունեն:

Աշխափավարձի միջջուղային տարբերակումը վերջին դարիներին դրական միգումներ է արձանագրել Ղազախսպանում, Մոլդովայում, Ռուսաստանի Դաշնությունում, որպես գիրական հետազոտությունների և մշակումների բնագավառում աշխափավարձի մակարդակն աճել է ավելի բարձր գենալերով, քան տնտեսության այլ ճյուղերում, մասնավորապես՝ 2012 թ. 2011-ի համեմապ թվարկված երկրներում այն ավելացել է համապարականաբար 4, 2 և 3 տոկոսային կերպով (աղյուսակ 6):


Աղյուսակ 6

Տնտեսության առանձին ճյուղերում միջին աշխափավարձերի մակարդակների հարաբերակցությունը (%-ով միջին ամսական անվանական աշխափավարձի նկարմամբ)⁵⁷

Ի/Հ	Եղիքին	Տարբերակ	Գիրական	Դաշնությունության	Արդարադատության	Հաստիքական	Համակարգության	Համակարգության	Համակարգության	Համակարգության	Համակարգության
1.	Աղյուսական	2011	164	324	45	110	142	77	275	54	155
		2012	155	351	43	113	147	72	264	50	156
2.	Բելառուս	2011	139	110	82	106	110	78	174	70	103
		2012	133	110	81	101	114	75	166	75	106
3.	Վայասպան	2011	109	156	78	112	127	72	261	65	210
		2012	102	163	77	112	120	71	260	74	219
4.	Ղազախսպան	2011	198	118	76	99	113	67	194	54	144
		2012	202	125	74	95	108	63	192	48	143
5.	Ղրղզսպան	2011	114	109	62	90	111	70	261	60	166
		2012	107	109	61	91	79	70	216	51	152
6.	Մոլդովա	2011	101	111	99	113	94	90	198	60	121
		2012	13	17	98	121	102	88	187	62	118
7.	Ռուսասպան	2011	106	193	75	118	101	67	238	53	122
		2012	109	189	77	134	97	71	221	53	118
8.	Ուկրաինա	2011	104	118	79	115	85	67	202	68	119
		2012	103	115	79	113	82	72	196	66	114

⁵⁷ Կազմված է մեր կողմից ԱՊՀ անդամ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների գովազնությամբ հիմնա վրա:

Հակառակ պարկերն է Աղբբեջանում, Բելառուսում, Ռուսահնայում, Հայաստանում և Ղրղզստանում: Բացի այն, որ թվարկված երկրներում գիրական հետազոտությունների և մշակումների ոլորտում հավկացվելիք միջին աշխատավարձերը 2012 թ. նվազել են 2011 թ. համեմատությամբ, դրանք ցածր են նաև դնդանական այլ ոլորտներում արձանագրված աշխատավարձերի մակարդակներից, ինչը չի կարող խթանել այդ ոլորտի զարգացումը: Չե՛ որ հենց նյութական շահագրգուվածությունն է առաջին հերթին մարդուն սփիփում ծախսել իր աշխատուժը, ահա ևս մեկ պարճառ, ինչը հանգեցնում է ուղեղների արդահոսքին երկրից: Իսկ առանց «ուղեղային կենդրունների» դժվար թե հնարավոր կլինի խոսել դնդանական զարգացման մասին: Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական ոլորտում զբաղվածները երկու ամսամ, շատ դեպքերում՝ նույնիսկ ավելին են վարձագրվում գիրական գործունեություն իրականացնողներից: 2012 թ. ֆինանսական ոլորտի աշխատողների աշխատավարձը կազմել է երկրում զրանցված միջին ամսական աշխատավարձի 260%-ը, մինչդեռ գիրական հետազոտությունների և մշակումների բնագավառում զբաղվածների աշխատավարձը կազմել է ընդամենը միջին անվանական աշխատավարձի 102 %-ը (զծապարկեր 6):



Գ-ՃԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ 6

«Դ դնդանական աշխատավարձերի մակարդակների հարաբերակցությունը (%-ով միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ) 2011–2012 թթ.»⁵⁸

Անվիճելի է, որ երկրի դնդանական զարգացման համար առանցքային նշանակություն ունի ֆինանսական ոլորտը: Ներկայիս դնդանական աշխատավարձը կազմում է աշխատավարձի մակարդակների միջին աշխատավարձերի մակարդակների հարաբերակցությունը (%-ով միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ) 2011–2012 թթ.՝ 260%-ը:

⁵⁸ Կազմված է ՀՀ ԱՎԾ դպրության հիման վրա:

վարման պայմաններում բանկերը իրենց ուրույն դերն ունեն դրանում: Վստոր մեր հանրապետությունում բանկային համակարգի աշխափողները երեք և ավելի անգամ բարձր են վարձապրովում գիրական գործունեությամբ զբաղվողներից: Սակայն եթե խելամիտ դագենք, ապա պետք է փասբենք այն, որ հենց գիրական ներուժն է այդ նույն բանկային համակարգի հիմնական գարգացման հենքը: Այդ դեպքում ինչու պետք է նրանք ցածր վարձապրովեն: Մրանք հարցեր են, որ լուծում են պահանջում, հակառակ դեպքում հեռանկարում երկրի գնդեսական համակարգը կհայդնըվի փակուղում: Գիրության հետ համեմարձ՝ բարձր են նաև գրեղեկաբարդության և կապի բնագավառի աշխափողների աշխափավարձերը: Եսք չի մնում նաև արդյունաբերության ոլորքը: Նշված ոլորքների աշխափավարձի մակարդակները 2012 թ. գիրական հետազոտություն իրականացնողների աշխափավարձի մակարդակների նկատմամբ ավելի են եղել համապարասխանաբար 2.1 և 1.5 անգամ: ԱՊԴ գրեթե բոլորներկրներում կրթության բնագավառում հարկացվելիք աշխափավարձերը միջին անվանական աշխափավարձերի նկատմամբ ունեցել են անկման միգումներ, բացառությամբ Ռուսասփանի և Ուկրաինայի, ինչը նույնպես բացասական ազդեցություն է թողնում նորարարական համակարգի և դրանով պայմանավորված երկրի գնդեսական գարգացման վրա: Անվիճելի է այն փասբը, որ որոկյալ կրթություն սպացած աշակերտն է հետազում զբաղվելու որակյալ գիրական հետազոտությամբ: Նման պայմաններում չի կարելի խոսել մարդկային կապիփալի դերի մեծացման մասին կայուն գնդեսական գարգացման ապահովման գործում:

2013 թ. սեպտեմբերի 4-ին Համաշխարհային գնդեսական համաժողովը հրապարակեց «Համաշխարհային մրցունակություն 2013/2014» գենկույցը⁵⁹, որում Հայասփանը աշխարհի 148 երկրների շարքում զբաղեցրել է 79-րդ տեղը՝ նախորդ գրադաւ 82-րդ տեղի համեմագի:

Երկրի մրցունակության մակարդակը զնահափելու նպագակով Համաժողովի փորձագետները դիմում են ամեն մի երկրի գնդեսաւության դրամների հիմնայուների (հասպագությունների, ենթակառույցների, մակրոփնտեսական կայունության, առողջապահության և գարրական կրթության, բարձրագույն կրթության և վերապարասպումների, ապրանքային շուկայի արդյունավետության, աշխագումի շուկայի արդյունավետության, ֆինանսական շուկայի զարգացվածության, գրեթե չափի, գործարարության զարգացվածության և նորանուծությունների) մեջ ներառվող շուրջ 114 ցուցանիշներ:


⁵⁹ Աղյուրը՝ «Համաշխարհային մրցակցության 2013-2014 գենկույց» Համաշխարհային գնդեսական համաժողով, Ժնև, 2013 թ., 569 էջ:

Նախորդ գրարվա համեմակի Հայաստանի մրցունակության 12 հիմնասյուններից բարելավում է գրանցվել 7-ում, այդ թվում նաև նորամուծությունների ոլորպում (2 գրեղով), որը հիմնականում փեղի է ունեցել համալսարան - արդյունաբերություն - հետազոտական համագործակցության (բարելավում 15 գրեղով), գիտահետազոտական ինստիտուտների որակի (բարելավում 5 գրեղով), ինչպես նաև 1 մն նարդու հաշվով պատենտների քանակի ավելացման շնորհիվ (բարելավում 3 գրեղով): Սակայն պետք է նշենք, որ արձանագրվել է նաև որոշակի հետքնթաց նորամուծությունների ունակության (15 գրեղով) և առաջավոր գեիմնոլոգիական արտադրանքի պետական գնումների (3 գրեղով) ոլորպներում: ԱՊԴ երկրների կրթական նորամուծությունների մակարդակով Հայաստանը գերազանցում է Ղրղզստանին, Մոլդովային, Ռուսաստանի Դաշնությանը, Ուկրաինային (աղյուսակ 7, գծապատկեր 7):

Աղյուսակ 7

Հայաստանի դիրքը ԱՊԴ երկրների թվում «Նորամուծություններ և կարարելազործման խթանիչներ» փուլի առանձին գործոնների գծով (2013–2014 թթ. ինդեքս)

Երկիրը	Նորամուծություններ և կարարելազործման խթանիչներ	
	Ըստ կարգավորման	Ըստ պատճենի
Ադրբեյչան	60	
Ղազախստան		87
Հայաստան		88
Ուկրաինա		95
Լուսաստան		99
Մոլդովա		133
Ղրղզստան		140



Գծապատկեր 7

Հայաստանի դիրքը ԱՊԴ երկրների թվում «Նորամուծություններ և կարարելազործման խթանիչներ» փուլի առանձին գործոնների գծով (2013–2014 թթ. ինդեքս)

ԱՊԴ-ն կարող է դառնալ կայուն ինովացիոն գնդեսությամբ մակրոռեզիտ՝ հենվելով իր մարդկային կապիֆալի վրա: Ինչպես նշել է Զ. Ստիգլիցը, նոր գեխնոլոգիաները ինովացիոն ոլորտում կափարվող ներդրումների հետ միասին հնարավորություն կրան զարգացող երկրներին հասնելու դրական արդյունքների իրենց գնդեսական քաղաքականություններն իրականացնելիս: Համարեղ ներդրումները հնարավորություն կրան միավորել ԱՊԴ անդամ երկրների ոչ լիարժեք օգտագործվող ֆինանսական և աշխատանքային ռեսուրսները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

«Տնտեսական զարգացում» և «Տնտեսական աճ» հասկացությունները վնդեսագիրական հետազոտություններում թեև հաճախ օգտագործվում են որպես հոմանիշ, սակայն մի շաբթ ուսումնասիրություններում հսկակորեն նշվում են դրանց հիմնական գործերությունները: Տնտեսական աճը, սովորաբար, դիմում է որպես գործընթաց, որը փնտեսության մեջ քանակական և որակական փոփոխությունների արդյունք է, ինչպես օրինակ՝ հողային, աշխատանքային, ձեռնարկագիրական ռեսուրսների, ինչպես նաև կապիրալի և գելխնողիաների քանակական և որակական բարելավումը, կապիրալի և աշխատանքի արդարողականության բարձրացումը: Ի գործերություն փնդեսական աճի՝ վնդեսական զարգացումը փնդեսության սոցիալգրանդական գործընթաց է: Մեյրի և Բոլդվինի բնորոշմամբ փնդեսական զարգացումը մի գործընթաց է, եթե վնդեսությունում մեկ շնչի հաշվով իրական եկամուտն աճում է գիտական ժամանակահարվածում: Ենդազություններում առանձնացնում են փնդեսական զարգացման այն առանձնահարկությունները, որ բնորոշ են զարգացած գիտական ունեցող երկրներին: Այսպես, կայուն փնդեսական աճ, հետևաբար՝ նաև զարգացում արձանագրող փնդեսությունները որպես կանոն բնութագրվում են արդյունաբերական ոլորտի, կապիրալային միջոցների, բարձր գելխնողիաների կիրառման մեծ դեսակարար կշիռներով և բնակչության աճի ցածր դեմքերով⁶⁰:

Ներկա ուսումնասիրության շրջանակներում կանդրադառնանք որոշ փնդեսական ցուցանիշների (մեկ շնչին ընկնող ՌՆԱ, օպարերկրյա ուղղակի ներդրումներ, հիմնական կապիրալի համախառն կուրակում և այլ) և կառավարման մակարդակը զնահագող մի շաբթ որակական ցուցանիշների (քաղաքական կայունություն, կառավարման արդյունավետություն, ձայնի ազագություն, կոռուպցիայի վերահսկողություն և այլն) փոխկապվածությանը: Կիրածենք առկա դպրությանը միջոցով զնահագել ՀՀ-ում վերոհիշյալ ցուցանիշների դեմքն ու դինամիկան:

Վերջին երկու դասնախակում փնդեսական աճի և քաղաքական ուժիմի կայունության փոխկապվածության բազմաթիվ ուսումնասիրություններ կան: Առավել հայտնի են Ռումերի, Գուպտայի, Բարբոյի, Ալեգի-

⁶⁰ <http://www.newagepublishers.com/samplechapter/000186.pdf>

նայի և Տարեկինիի, Պերոպիի և այլոց վերլուծությունները: Որոշ հետազոտողներ եզրակացնում են, որ քաղաքական անկայունության վիճակը ուղղակիորեն խոչընդունում է և կրծագում արփադրական գործոնների արփադրողականությունը⁶¹: Բարրոյի գնահարմամբ՝ քաղաքական անկայունությունը պայմանավորող հիմնական երևոյթները հակադարձ են հարաբերակցված (կոռեկցված) ՇՎ-ի աճի դեմքերի և ՇՎ-ի մեջ ներդրումների դրսակարար կշռի հետ: Ըստ հետազոտողի՝ քաղաքական անկայունությունը, նախ և առաջ, բացասաբար է անդրադառնում սեփականության իրավունքի ինսպիրուտիվի վրա, ինչն էլ, իր հերթին, խոչընդունում է դրսակարար անկայունության աճին և ներդրումների դեմքերի ավելացմանը⁶²: Շետազուրկությունները ցույց են տալիս, որ քաղաքական անկայունության երևոյթը, որպես կանոն, ունի կայուն և տևական բնույթ: այն երկրները, որոնք աչքի են ընկնում կառավարության հաճախակի փոփոխություններով, ունեն կառավարման ճգնաժամերում հայդնվելու ավելի մեծ հավանականություն⁶³:

Տեսական և էնպիրիկ գրականությունը առանձնացնում է քաղաքական անկայունություն հարուցող երկու խումբ երևոյթներ՝⁶⁴. առաջին խումբը կազմում են սոցիալ-քաղաքական խոռվություններով պայմանավորված իրադարձությունները՝ զանգվածային ահարեւէցություն, քաղաքական սպանություններ, անկարգություններ, հեղափոխություններ և այլն, որոնց պարճառ կարող են լինել ազգային, լեզվական, կրոնական, գաղափարական և տնտեսական հակամարդությունները, որոնք բավարար միջամբություն և լուծում չեն սպանում առկա ինսպիրուվածներից: Երկրորդ խմբի մեջ են այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են կառավարության հրաժարականը, ընդդրական և հետքրնդրական անսպասելի զարգացումները և այլն՝ հիմնականում պայմանավորված ընդդրուների և ընդդրուների կամ հասարակության և առկա կառավարության միջև շահերի բախմամբ: Երկու խումբ իրադարձություններն ել սպեղծում են անորոշության մթնոլորդ, ինչպես ինսպիրուցիոնալ համակարգի (պետական կառավարման ծև, իրավական համակարգ և այլն), այնպես էլ դրսականության ընդհանուր զարգացման առանցքի (հարկային դրույքաչափի առանձնահատկությունը) և առանձնահատկությունը:

⁶¹ Gupta D., *The Economics of Political Violence*, New York, NY: Praeger, 1990.

Alesina Alberto, Ozler Sule, Roubini Nouriel, Swagel Philip, „Political Instability and Economic Growth,” working paper, W4173, National Bureau of Economic Research, 1992.

⁶² Մեջբերումը տե՛ս Ali, M. Political Instability, Policy Uncertainty, and Economic Growth: An Empirical Investigation, JEL O17, O40, P51; Atlantic Econ. J., 29(1): pp. 87-106, Mar. 01.

⁶³ Alesina Alberto, Ozler Sule, Roubini Nouriel, Swagel Philip, „Political Instability and Economic Growth”, working paper, W4173, National Bureau of Economic Research, 1992.

⁶⁴ Carmignani F., POLITICAL INSTABILITY, UNCERTAINTY AND ECONOMICS, JOURNAL OF ECONOMIC SURVEYS Vol. 17, No. 1, 0950-0804/03/01 0001-54, Blackwell Publishing Ltd. 2003, 9600 Garsington Road, Oxford, OX4 2DQ, UK.

փեր, ամբողջական պահանջարկ, հասարակական քարիքների անհրաժեշտ քանակության կանխագիծներում, փոխանակային կուրսերի քաղաքականություն, սղաճի կարգավորմանն ուղղված քաղաքականություն և այլն) շուրջ: Զեավորված անորոշության մթնոլորդը, իր հերթին, նվազեցնում է մասնավոր անհավների և ֆիրմաների՝ դպրության մեջ ներդրումներ կարարելու խթանները: Տեսական իիմնավորմամբ հանդերձ՝ էմպիրիկ գրականությունը միշտ չէ, որ միանշանակ և վերջնականութեն փաստում է դրամաբանական այս շղթայի ճշմարդացիությունը և կայուն բնույթը: Օրինակ, Բարրոյի⁶⁵ հետազոտությունները փաստում են, որ հեղափոխությունները, հեղաշրջումները, ինչպես նաև քաղաքական սպանությունները բացասական են անդրադառնում դնդեսական աճի գործընթացի վրա, մինչդեռ Էսպերիի և Ռեբելոյի ուսումնասիրությունները ցույց են դալիս, որ քաղաքական սպանությունները և պարերազմների հետևանքով մարդկային կորուսփները էական ազդեցություն չունեն դնդեսական աճի ցուցանիշի վրա: Լիվինի և Ռենելիփի վերլուծությունը ցույց է դալիս, որ հեղափոխությունները և հեղաշրջումները, քաղաքայի ազագության ինդեքսը չունեն էական հարաբերակցություն դնդեսական աճի հետ, սակայն հեղափոխությունները և հեղաշրջումները **ՇԱԱ-ի** մեջ ներդրումների դեսակարար կշռի ցուցանիշի հետ գպնդում են բացասական հարաբերակցության մեջ⁶⁶: Հսկ Սալայի Մարդինի հետազոտությունների՝ հեղափոխությունները և հեղաշրջումները բացասարար են անդրադառնում դնդեսական աճի վրա (եթե ներդրումների ցուցանիշը որպես ռեգրեսոր ներառված չէ աճի հավասարման մեջ), սակայն քաղաքական սպանություններն ու էթնոլեզվական հակամարդությունները չունեն էական ազդեցություն դնդեսական աճի վրա: Ալեգինան և Պերովին էմպիրիկ դպրաների միջոցով իիմնավորում են, որ սոցիալ-քաղաքական անկայունության անփոփի ինդեքսը բացասական կախվածության մեջ է դնդեսական աճի ցուցանիշից⁶⁷:

Փորձենք դնդեսական գարգացումը բնութագրող քանակական որոշ ցուցանիշների միջոցով ներկայացնել, թե արդյոք դրանք որոշակի կախվածություն ունեն քաղաքական կայունության, ինչպես նաև կառավարման որակն ու արդյունավելությունը գնահատող այլ ցուցանիշներից: Թեպես փորձնական հետազոտությունները, ինչպես արդեն նշել

⁶⁵ Barro R.J., Economic growth in a cross-section of countries. The Quarterly Journal of Economics, 106, 1991, 407– 443

⁶⁶ Carmignani F., POLITICAL INSTABILITY, UNCERTAINTY AND ECONOMICS, JOURNAL OF ECONOMIC SURVEYS Vol. 17, No. 1, 0950-0804/03/01 0001–54, Blackwell Publishing Ltd. 2003, 9600 Garsington Road, Oxford, OX4 2DQ, UK.

⁶⁷ Alesina, A. and Perotti, R. (1996) Income distribution, political instability and investment. European Economic Review, 40, 1203– 1228.

ենք, իիմնված են տնտեսական աճի և քաղաքական անկայունության (առավելապես անկայունության, քան թե կայունության) կապի գոյության դրեսական իիմնավորումների գործնական ապացույցների փնտրվութների վրա:

Աղյուսակ 8

Հարաբերակցական (կորեկտացիայի) մաղրից (ՀՀ 1996–2012 թթ.)


Հայսապրան 1996–2012 թթ.	Զայնի ազարու- թյուն	Քաղա- քական կայու- նություն	Կառավար- ման արդ- յունավե- լիքություն	Կառա- վարման որակ	ՀՆԱ/մեկ շնչի հաշվով (ընթացիկ ԱՄՆ դոլար)
ՀՆԱ/մեկ շնչի հաշվով (ընթացիկ ԱՄՆ դոլար)	-0.713	0.666	0.615	0.839	1
Հայսապրան 1996–2012թթ.	Զայնի ազարու- թյուն	Քաղաքա- կան կայու- նություն	Կառավար- ման արդ- յունավե- լիքություն	Կառա- վարման որակ	ՀՆԱ/մեկ շնչի հաշվով
ՀՆԱ/մեկ շնչի հաշ- վով (ԱՄՆ դոլար՝ ըստ գնողունակու- թյան պարիտետի)	-0.652	0.75	0.714	0.914	1

Աղյուսակ 8-ի արդյունքները հաշվարկված են «Համաշխարհային կառավարման ցուցիչներ» ծրագրի շրջանակներում 2013 թ. կարարված հետքազության գովայնների հիման վրա: Նշված հետքազության արդյունքները ներկայացված են առանձին վարեկան ցուցիչների գեներալ (1996–2012թթ.)⁶⁸, որոնց արժեքները բարանվում են -2.5-ից 2.5 բալային գիրույթում: -2.5 գովայացույցի նվազագույն, իսկ 2.5՝ առավելագույն արժեքն է: Սպորև ներկայացված չորս գծապատկերները (գծապատկեր 8) արդացույում են չորս ցուցիչների և մեկ շնչին ընկնող ՌՆԱ-ի ցուցակցումները (ՀՀ, 1996–2012 թթ.): Մեկ շնչին ընկնող ՌՆԱ-ի ցուցանիշները վերցված են Համաշխարհային բանկի գովայացույցից⁶⁹: Ինչպես երևում է հարաբերակցական (կորեկտացիոն) մաքրիցից (աղյուսակ 8), չորս ցուցիչների կապը մեկ շնչին ընկնող ՌՆԱ-ի հետ բնութագրվում է հարաբերակցության կամ միջին, կամ բարձր ասդիմաններով: «Զայնի ազարություն», ցուցիչի և մեկ շնչին ընկնող ՌՆԱ-ի միջև հարաբերակցության գործակիցը բացասական է, մինչդեռ մնացյալ երեք ցուցիչներինը՝ դրական: Ինչն է ենթադրում է, որ 1996–2012 թթ. մեկ շնչին ընկնող ՌՆԱ-ի աճի միտքանը զուգընթաց՝ ձայնի ազարության ցուցիչը դրսնորել է

⁶⁸ www.govindicators.org


⁶⁹ <http://data.worldbank.org/indicator/NY.GNP.PCAP.PP.CD>

նվազման միգում, մինչդեռ քաղաքական կայունության, կառավարման արդյունավետության, կառավարման որակի ցուցիչները աճել են:



Գ-ծառապայման 8

Համաշխարհային կառավարման 4 ցուցանիշների և մեկ շնչին ընկնող ԾՆԱ միջն ցուցակցումները (ԾՆ 1996–2012 թթ.)




Գ-ծառապայման 9⁷⁰

ԾՆ կառավարման ցուցիչների դինամիկան 1996–2012 թթ.

Գծապարփեր 9-ում ներկայացված է ԾՆ կառավարման վեց ցուցիչների դինամիկան 1996–2012 թթ. Ժամանակահարվածում:

⁷⁰www.govindicators.org

Ինչպես երևում է գծապատկեր 10-ից՝ քաղաքական կայունության ցուցիչը դրական է հարաբերակցված օպարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների հետ: Բոլոր այն փարիներին, եթե ՀՀ-ի համար գրանցվել է քաղաքական կայունության բարձր ցուցիչ, ՀՀ օպարերկրյա ուղղակի ներդրումների բարձր ցուցանիշներ են գրանցվել:



Գծապատկեր 10

ՀՀ-ում օպարերկրյա ուղղակի ներդրումների և քաղաքական կայունության ցուցիչ գուգակցումների բաշխվածությունը
(ՀՀ 1996–2012 թթ.)

Մարդկային ներուժի զարգացման ցուցիչի (ՄՆԶՅ)⁷¹ և քաղաքական կայունության, կառավարման արդյունավետության, կառավարման որակի ցուցիչների հարաբերակցության գործակիցները շատ բարձր են (գենա աղյուսակ 9): Դրական, սակայն ցածր հարաբերակցության գործակիցներով են աչքի ընկնում օրենքի առկայության և կոռուպցիայի վերահսկողության ցուցիչների և մարդկային ներուժի ցուցիչի միջև կապը:

Աղյուսակ 9


ՄՆԶՅ-ի և կառավարման 5 ցուցիչների միջև
հարաբերակցության գործակիցները

ՀՀ (2000–2012թթ.)	Քաղաքական կայունություն	Կառավարման արդյունավետություն	Կառավարման որակ	Օրենքի առկայություն	Կոռուպցիայի վերահսկողություն
ՄՆԶՅ	0.886946	0.772211568	0.970783	0.2385229	0.37264653

Սպորտ ներկայացված գծապատկերները (գենա Գծապատկեր 11) կառուցված են աշխարհի 200 երկրների համապատասխան ցուցանիշների հիման վրա, որոնք ընդլայնվում են 1996–2012 թթ., դիմումների

⁷¹ <http://hdr.undp.org>

ընդհանուր թիվը՝ 2085: Ինչպես երևում է զծապավկերներից՝ կառավարման բոլոր վեց ցուցիչների և մեկ շնչի հաշվով ՌՆԱ-ի ցուցանիշների (արդահայտված ՀԱՄ դուրսը) գուգակցումները պափկերում են դրական և աճող միջումներ ունեցող կորեր:



Գ-ԶԱՊԱՄՐԼԻՔ 11

Համաշխարհային կառավարման ցուցիչների և մեկ շնչի հաշվով ՌՆԱ գուգակցումները (ՀՀ 1996–2012 թթ.)

Նշված բոլոր վեց ցուցիչներն ունեն դրական հարաբերակցվածության (կոռելացվածության) միջին և բարձր աստիճան մեկ շնչին ընկնող հիմնական կապիտալի համախառն կուպակումներ՝⁷² ցուցանիշի հետ և ցածր, սակայն դրական հարաբերակցվածություն օգարերկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշի հետ (վեն աղյուսակ 10):

Աղյուսակ 10

Հարաբերակցության աղյուսակ (186 երկիր, 2000–2012 թթ.)

	Զայնի ազատու- թյուն	Քաղա- քական կայու- նություն	Կառավար- ման ար- դյունավե- լություն	Կառա- վար ման որակ	Օրենքի առկայու- թյուն	Կոռուպ- ցիայի վե- րահսկո- ղություն
Օստարերկրյա ուղղակի ներ- դրումներ (ԱՄՆ դոլար)	0.184296	0.124955	0.307335	0.28825	0.2754076	0.26891348
Հիմնական կա- պիտալի համա- խառն կուտա- կում (ԱՄՆ դո- լար՝ մեկ շնչ հաշվ.)	0.516702	0.5435340	0.709189	0.65883	0.7044392	0.72297369
Մեկ շնչին ընկ- նող ՀՆԱ (ԱՄՆ դոլար՝ ըստ գնո- ղունակության պարիտետ)	0.526688	0.5836479	0.762406	0.72462	0.746243	0.75053694

Կառավարման վեց ցուցիչները նաև դրական և բարձր հարաբերակցվածության գործակից ունեն մարդկային ներուժի զարգացման ցուցիչի հետ, ինչն ակնհայփորեն երևում է աղյուսակ 11-ում ներկայացված հարաբերակցվածության գործակիցներից: Վյո գործակիցները հաշվարկվել են աշխարհի 186 երկրների համապատասխան ցուցանիշների հիման վրա, որոնք ընդունվել են 2000–2012 թթ. (դիմարկումների թիվը 903):

Աղյուսակ 11

ՄՆԶՅ-ի և կառավարման 6 ցուցիչների միջև
հարաբերակցության գործակիցները (186 երկիր, 2000–2012 թթ.)

	Զայնի ազատու- թյուն	Քաղա- քական կայունու- թյուն	Կառա- վարման արդյունա- վելություն	Կառավար- ման որակ	Օրենքի առկայու- թյուն	Կոռուպ- ցիայի վերահսկո- ղություն
ՄՆԶՅ	0.63	0.62	0.80	0.76	0.77	0.72

⁷² Հիմնական կապիտալի համախառն կուպակումը ոնքիդեմք կառուցվածքային միավորների վնասի սական օգուտ սպանալու նպագակով միջոցների ներդրումն է հիմնական կապիտալի օբյեկտներում:

Այսպիսով, վերը նշված դիբարկումները ցույց են տրախս, որ պետական կառավարման մակարդակը գնահատող վեց ցուցիչներն ունեն բարձր և դրական հարաբերակցություն մեկ շնչին ընկնող ՇՎ-ի, հիմնական կապիֆալի համախառն կուրակման (մեկ շնչի հաշվով) ցուցանիշների, մարդկային ներուժի զարգացման ցուցիչի հետ և ցածր, սակայն դրական հարաբերակցություն օբարերկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշի հետ:

Վերը նշված ցուցանիշների միջոցով, փորձել ենք սրանալ ռեգրեսիոն մոդել, որին որպես ամկախ փոփոխական ընդունված է մեկ շնչին ընկնող ՇՎ-ն, իսկ որպես կախյալ փոփոխականներ՝ քաղաքական կայունության, կառավարման արդյունավետության, կառավարման որակի ցուցիչները, հիմնական կապիֆալի համախառն կուրակման (մեկ շնչի հաշվով), օբարերկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշները (դիբարկումների թիվը՝ 1977, մոդելը ներառում է աշխարհի 200 երկրների 1996–2012 թթ. համապարավասան ցուցանիշները): Սրացված գծային ռեգրեսիոն մոդելի դեպքերմինացիայի գործակիցը՝ $r^2 = 87\%$, ինչը բարձր ցուցանիշ է: F թեսքի արդյունքներով H0 վարկածը մերժվել է (եթե $p = 0.05$), ինչը հավասպում է, որ հավասարման բոլոր փոփոխականների գործակիցները միաժամանակ զրո լինել չեն կարող: Սրացված հավասարումն օգբագործելով կարելի է գնահատել, թե որքանով կփոփոխվի, օրինակ, ՇՎ մեկ շնչին ընկնող ՇՎ-ն, եթե քաղաքական կայունության ցուցիչը փոփոխվում է 1-ով, այս դեպքում այն 400–500 ԱՄՆ դոլար է, իսկ կառավարման արդյունավետության ցուցիչի 1-ով փոփոխելու դեպքում՝ 1000–1200 ԱՄՆ դոլար:

Վերլուծության արդյունքները կարելի է առավել ճշգրիտել, եթե ընդլայնված ներկայացվի կառավարման վեց ցուցիչների առանձին բաղկացուցիչները, այսինքն՝ անհրաժեշտ է առավել մանրամասն վերլուծել, թե որ գործոնն է առավել ազդեցիկ զարգացման գործընթացի վրա:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐԱԴԱՐՁԸ

5.1

Կապիտալի ծախսի հաշվարկման փարածված մեթոդաբանությունները և դրանց մասնակի կիրառությունը ՀՀ փնտեսության համար: Ներդրումներից ակնկալվող վերադարձի արժեքը Հայաստանում

Զարգացող փնտեսություններում ներդրումների իրականացման դեսանկյունից կարևոր է գնահատել փնտեսությունում ներդրում կապարելու ռիսկայնության և ներդրումներից ակնկալվող վերադարձի արժեքները: Այլ կերպ ասած՝ խիստ կարևոր է որոշակի պարկերացում ունենալ կապիտալի վերադարձի նվազագույն սահմանային արժեքների մասին:

Տնտեսագիտական գրականությունում կան երկրի ռիսկի և ներդրվող կապիտալի ակնկալվող վերադարձի հաշվարկման փարբեր եղանակներ: Այսպես խոսքը վերաբերում է համակարգային ռիսկին: Համակարգային է այն ռիսկը, որը հնարավոր չէ նվազեցնել բազմազանեցման միջոցով: Այս առումով ներդրողներն իրենց ներդրումներից ակնկալվող վերադարձը պայմանավորում են համակարգային ռիսկի մակարդակով: Այլ կերպ ասած՝ բարձր համակարգային ռիսկի դեպքում ներդրումներից ակնկալվող վերադարձը պետք է լինի ավելի բարձր: Համակարգային ռիսկի գնահարման պարզագույն մոդելը՝ Շառֆի, Լինթերի և Բլաքի CAPM (capital asset pricing model) մոդելը⁷³: Այս մոդելը սկզբնապես ներկայացվել է ԱՄՆ փնտեսության օրինակով, ընդ որում՝ սկզբնական շրջանում որոշ էնախիրիկ հետազոտություններ ընդգծում էին մոդելի կիրառելիությունն ԱՄՆ-ի փնտեսության համար⁷⁴:

Մոդելի հիմնական հավասարումը հետևյալն է՝

$$r_i = r_f + \beta_i (r_m - r_f),$$

որտեղ՝ r_i -ն և ակդիվում իրականացվող ներդրումից ակնկալվող վերադարձն է,
 r_f -ն ռիսկ չկրող ակդիվից ակնկալվող վերադարձն է (հիմնականում պերական պարփակումների մասին է խոսքը), $(r_m - r_f)$ -ը՝ փվյալ շուկայում իրականացված ներդրման հավելյալ ռիսկը կրելու «պարզևավճարն» է, իսկ β_i ՝ փվյալ շուկայի համակարգային ռիսկի գնահարման գործակիցն է:

⁷³ „Capital asset prices: A theory of market equilibrium under conditions of risk”, Sharpe William, Journal of Finance, 1964.

„Capital market equilibrium with restricted borrowing”, Black Fisher, Journal of Business, 1972.

⁷⁴ „Risk, Return and Equilibrium: Empirical Tests”, Fama, Eugene and MacBeth, Journal of Political Economy, 1973.

Այս մոդելն առաջին անգամ միջազգային համարեխափում օգտագործել է Սոլնիկը⁷⁵: Սակայն մի շարք հետազոտություններ մապնանշում են, որ այս մոդելի կիրառումը զարգացող գնդեսությունների համար պիտանի չէ⁷⁶: Զարգացող գնդեսությունների համար երկրի ռիսկի հաշվարկման գնահատությունից գործածված են մի շարք մոդելներ. մասնավորաբեր՝ Գոլդմանի (ֆոկոսադրույքների սիրելի մոդելը), CSFB-ի, Շամոդարանի և Էրբ-Նարվեյ-Վիսկանդայի մոդելները⁷⁷: Սույն հետազոտությունում կօգտվենք Էրբ-Նարվեյ-Վիսկանդայի մոդելից՝ կիրառելով այն ՀՀ գնդեսության համար: Մոդելը կառուցվել է 135 երկրների համար: Մոդելի կառուցման կարևոր առանձնահավկություններից է այն, որ ռիսկի գնահապման ցուցանիշի հաշվարկումը պետք է հնարավոր լինի հետազոտվող 135 երկրների համար՝ նույնիսկ այն երկրներում, որտեղ կապիտալի շուկան, ըստ էության, բացակայում է⁷⁸:

Մոդելի մյուս կարևոր առանձնահավկությունն այն է, որ բացառում է մակրոգնդեսական ցուցանիշների օգտագործում՝ պայմանավորված նրանով, որ մի շարք դեպքերում զարգացող երկրների համար մակրոգնդեսական վիճակագրական գովազները պարունակում են սխալների և խոցիոնալության բարձր ասդիման: Այս մոդելի հիմքում ընկած է երկրների վարկային ռեյֆինանսները:

Երկրների վարկային ռեյֆինանսները հաշվարկվում են բանկիրների «Ինսպիրուցիոնալ ներդրողներ» կիսամյակային հարցումների հիման վրա: «Ինսպիրուցիոնալ ներդրողներ» հարցումը գործելու անգամ հրապարակվում է՝ սկսած 1979 թ.-ից: Հարցումներն իրականացվում են աշխարհի խոշոր բանկիրների շրջանակում: Վերջիններս յուրաքանչյուր երկիր գնահապում են 0–100 բալային համակարգում, որտեղ 100 միավորն արգացողում է սնանկացման (դեֆոլփի) ամենացածր հավանականությունը: Սակայն այս բանկիրների պարապիտանները որոշակի գործակիցների միջոցով կշռվում են՝ հաշվի առնելով գովազներում (գործածաշրջաններում) բանկիրների (բանկերի) մասնակցությունը և դերակարգարությունը⁷⁹:

Նարը է ծագում՝ թե ինչպես են երկրի վարկային ռեյֆինանսները փոխակերպվում ռիսկի ընկալման ասդիմանի և որդեղից են ծագում վարկային ռեյֆինանսները: Գլոբալ միջավայրում գործող բանկերն ունեն վարկային վերլուծության սեփական անձնակազմերը, որոնց խնդիրն է գնահապել իրենց վարկերի «չաշխափելու» (դեֆոլփի) հավանականությունը:

⁷⁵ „Testing International Asset Pricing: Some Pessimistic Views.”, Solnik Bruno, Journal of Finance, 1977.

⁷⁶ „Country Risk in Asset Pricing Tests”, Ferson, Wayne and Harvey; Working Paper, Duke University, 1995.

⁷⁷ „International Cost of Capital and Risk Calculator”, Campbell R. Harvey, 2001.

⁷⁸ „Expected Returns and Volatility in 135 Countries”, C.B. Erb, C.R. Harvey and T.E. Viskanta, Spring, 1996.

⁷⁹ <http://www.institutionalinvestor.com>

Այդ վերլուծությունների մի ուղղությունը երկրի վարկային ռիսկի գնահատումն է: Եվ որքան բարձր է փվալ երկրում վարկառուների վարկային ռիսկի մակարդակը, այնքան մեծ պետք է լինեն վճարվող գոլկոսադրույթները: Կան մի շարք գործուներ, որոնք միաժամանակ ազդում են փվալ երկրի վարկային ռեյֆինգի մակարդակի վրա: Մասնավորապես՝ այդպիսիք են քաղաքական ռիսկերը, գնաճը, փոխարժեքի դրամանողականությունը և դրա վերահսկման ոչ շուկայական մեխանիզմները, գնդեական ճկունության ասդիճանը և այլն: Եվ քանի որ վարկային ռեյֆինգը հիմնված է հարցումների վրա, ուստի այն որոշակիորեն մոդարկում է ռիսկերի այս հիմնական գույները: Մյուս կարևոր առանձնահարկությունն է, որ եթե ռիսկերի գնահապման ավանդական մոդելումները հիմնված են որոշակի էմպիրիկ (անցյալի) պատահարների վրա, ապա վարկային ռեյֆինգները պարունակում են նաև որոշակի սպասումներ:

Էրբ-Նարվեյ-Վիսկանգայի մոդելը ներկայացվում է հետևյալ հավասարմամբ՝

$$R_i = a + a_1 \ln(CRR_{i,t-1}) + \varepsilon,$$

որպես՝ R_i կիսամյակային ակնկալվող վերադարձն է (ԱՄՆ դոլարով), CRR վարկային ռեյֆինգի մեծությունն է, որը գրաբեկան երկու անգամ հրապարակվում «Ինարփիդուցիոնալ Ներդրողներ» հարցման արդյունքներում: Հնդ որում, ժամանակահարվածը հաշվարկվում է կիսամյակներով, և ε -ն ուղղված է մնացորդն է:

Մոդելի միջոցով հեղինակները գնահապել են բոլոր երկրները մեկ ընդհանուր մեծ մոդելի շրջանակներում: Այս գետանկյունից, «ռիսկի պարզեցվածարը» (reward for risk) համընդհանուր է, առանձնահարուկ չէ որևէ կոնկրետ երկրի համար: Հնդ որում, թեքվածության գործակիցը պետք է լինի բացասական, քանի որ բարձր վարկային ռեյֆինգը ենթադրում է, որ միջինում ակնկալվող վերադարձները պետք է լինեն ավելի ցածր:

Մոդելի արդյունքները զարգացող գնդեատությունների համար ներկայացված են աղյուսակ 12-ում:

**Էրբ-Նարվեյ-Վիսկանգայի մոդելի արդյունքները ակնկալվող
վերադարձների կանխագիծման համար⁸⁰**

Աղյուսակ 12

	Մեծությունը	T-Stat
Թերություն	-14.09	-2.8
Հաղուման կետ	66.21	3.48
Adjusted R-Square	1.8%	

⁸⁰ „Expected Returns and Volatility in 135 Countries”, C.B. Erb, C.R. Harvey and T.E. Viskanta, Spring 1996, p. 53.

Վյժմ ներկայացնենք «Խնսդիքուցիոնալ ներդրողների» վերջին երկու հարցումների արդյունքները (գրես աղյուսակ 13): Աղյուսակ 13-ի դպրաները վկայում են, որ Հայաստանը վարկային ռեյֆինանզի ցուցանիշով զիջում է ինչպես Աղբբեջանին, այնպես էլ Վրաստանին. սա վկայում է, որ բանկիրների գումարները համարվում է ավելի բարձր ոխսային երկիր, ինչն էլ ենթադրում է, որ այսպես ներդրվող միջոցներից ակնկալվող վերադարձը պետք է լինի ավելի բարձր:

Վյժմ աղյուսակ 12-ի և աղյուսակ 13-ի դպրաներով հաշվարկենք ներդրողների գումարները Հայաստանի մասնաւոր թյունում կապարված ներդրումներից ակնկալվող արժեքները:

Հայք Էրք-Հարսկե-Վիսկանդայի առողկի մեթոդարանության՝ կապացմի, որ ներդրողները կապարված ներդրումների դիմաց ակնկաւում են 16.32% վերադարձ, որը, ըստ Հույթյան, բավական բարձր ցուցանիշ է, և Հայաստանի դրամի տուրքական բավական սահմանափակ քանակությամբ ճյուղեր կարող են ապահովել կիսամյակային կորուստով ամսան ցուցանիշ:

Աղյուսակ 13

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ներկրների վարկային ռեյֆինանզները

Հ/Հ	Երկրներ	Գլոբալ դիրք	Ինստիտուցիոնալ ներդրողների վարկային ռեյֆինանզ	
			Մարտ 2013	Մարտ 2012
1	Չեխիա	26	75.4	78.4
2	Ալգանիա	30	74	74.7
3	Էստոնիա	32	71	74.1
4	Լիհաստան	33	70.5	70.5
5	Սլովենիա	38	68.4	68.5
6	Ուստաստան	41	65.9	66.9
7	Լիտվա	48	60.6	57
8	Ղազախստան	55	57	55
9	Լատվիա	59	55.7	54.5
10	Խորվաթիա	60	55.1	53.3
11	Թուրքիա	64	53.3	53.1
12	Բուլղարիա	66	52.3	52.5
13	Ադրբեյչան	67	51.3	51.8
14	Ումբինիա	69	50.3	49.8
15	Հունգարիա	72	49.6	48.8
16	Մակեդոնիա	81	39.8	40.5
17	Կրաստան	82	39.2	40.2
18	Սերբիա	83	39.2	39.8
19	Սոնտենեգրո	85	38.3	38.9
20	Ալբանիա	90	37.3	35.9
21	Հայաստան	97	34.5	35.7
22	Ուկրաինա	102	32.7	34.4
23	Թուրքմենստան	110	29.3	28.5
24	Բունիա և Հերցոգովինա	114	29	28.2
25	Մոլդովա	115	28.3	26.5

Աղյուսակ՝ <http://www.institutionalinvestor.com/>

5.2

Հայաստանի բանկային համակարգում օպարերկրյա կապիֆալի մասնակցությամբ բանկերի կապիֆալի վերադարձի ընթացիկ միտումները

Սպազված արդյունքները համադրենք համակարգում կապիֆալի վերադարձի ցուցանիշի հետ: Որպես համադրվող հափած վերցրել ենք բանկային համակարգը՝ պայմանավորված հետևյալ գործոններով: Առաջին, բանկային համակարգում գործում են օպարերկրյա ներդրումների էական մասնակցությամբ մի շարք բանկեր: Երկրորդ, բանկային համակարգի վվալներն առավել հրապարակային և թափանցիկ են, ուստի հնարավոր է ճշգրիտ հաշվարկել կապիֆալի վերադարձի ցուցանիշները: Երրորդ, բանկերն իրենք ևս «ներդրողներ» են, որոնք փոխանցում են օպարերկրյա ներդրումներից ակնկալվող վերադարձի ազդակները դեպի դնդանական կողմանը՝ իրենց վարկային արդյունքների ձևով:

Հայաստանի բանկային համակարգի կանոնադրական կապիֆալում օպարերկրյա բաժնեմասնակցությունը բավական բարձր է, և 2012 թ. դեկտեմբերի դրությամբ ընդհանուր կանոնադրական կապիֆալում վերջինիս գումարը կշիռը կազմում է շուրջ 73%⁸¹: Ընդ որում, գործող 21 բանկերից կարող ենք առանձնացնել 9 բանկ, որոնց կապիֆալում օպարերկրյա մասնակցությունը գերազանցում է 50%-ը (գենուսակ 14)⁸²: Այդուսակ 14-ում ներկայացված է 2010–2013 թթ. օպարերկրյա մասնակցությամբ բանկերի կապիֆալի վերադարձի ցուցանիշները, որոնցից կարող ենք եզրակացնել.

Առաջին՝ թեև վերջին մի քանի տարիներում ֆինանսական միջնորդության նակարդակը Հայաստանում աճել է, սակայն կապիֆալի վերադարձի (շահութաբերության) ցուցանիշները բանկային համակարգում չեն աճել: Ավելին, եթե 2011 թ. միջինում «օպարերկրյա» բանկերն ունեին 10.79% կապիֆալի վերադարձի ցուցանիշ, ապա ըստ 2013 թ. դպրության՝ 6.99%:

Երկրորդ՝ բանկային համակարգում 2010–2013 թթ. ընթացքում կապիֆալի շահութաբերության առավելացույն ցուցանիշը կազմում է 24.07% (HSBC բանկը՝ 2011 թ.), որը բավականին ցածր է Երբ-Նարվեյ-Վիսկանֆայի մոդելի մեջողաբանությամբ սպացվող կապիֆալի վերադարձի ցուցանիշից: Իհարկե, հարկ է ընդգծել, որ մոդելի ցուցանիշը վերաբերում է ընդհանուր դնդանական կողմանը՝ ինչպես այսպիսական մասնակցությամբ բանկերի կապիֆալի վերադարձի ցուցանիշը:

⁸¹ «Ֆինանսական Կայունության հաշվեդրվություն 2012 թ»: ՀՀ Կենտրոնական Բանկ. էջ 35:

⁸² «Ներկայացված շարադրանքում պարզության համար այս բանկերը կվոչենք «օպարերկրյա»:

կային և ոչ ռիսկային հարվածները) կապիֆալի վերադարձի ցուցանիշին, իսկ այս համագեքսպում բանկային համակարգը դասվում է ոչ ռիսկային հարվածներին, ուստի նրանից ակնկալվող վերադարձի ցուցանիշը պետք է ավելի ցածր լինի միջին ցուցանիշից:

Աղյուսակ 14

**Շահութաբերությունն ըստ կապիֆալի / Return on Equity
(բարեկանացված), %**

Բանկեր / Տարեթվեր	2010	2011	2012	2013*
ACBA-CREDIT AGRICOLE BANK	11.38	14.46	9.00	10.26
HSBC Bank Armenia	22.59	24.07	22.31	22.01
Areximbank - Gazprombank Group	7.00	6.76	7.65	3.10
VTB Bank (Armenia)	15.82	15.15	15.68	16.29
ProCredit Bank	(1.49)	(5.60)	(4.98)	(1.08)
Byblos Bank Armenia	2.91	3.32	2.20	(3.61)
ArmSwissBank	10.58	11.60	14.47	10.95
Mellat Bank	14.79	22.53	4.47	2.57
BTA Bank	1.62	4.81	5.61	2.42
ՄԻԶԻՆ	9.47	10.79	8.49	6.99
Աղյուսակերի վերկայբերում իրապարակվող եռամյակային հաշվետվություններ				
* Հաշվարկվել է 3-րդ եռամյակի արդյունքների հիման վրա				

Այսականու՝ կարող ենք եզրակացնել, որ «օպարերկրյա» բամկերում ներդրված կապիֆալից ակնկալվող վերադարձի նկարմամբ ներդրողների սպասումները և պահանջները այն են, որ կապիֆալի վերադարձի ցուցանիշը պետք է ժամանակի ընթացքում աճի: Սա պայմանավորված է նրանով, որ օպարերկրյա ներդրողները Նայասպանը դեռևս ընկալում են որպես ռիսկային տնտեսություն ունեցող երկիր, ուստի բարձր ռիսկը պետք է փոխհապուցվի ավելի բարձր «պարզապեսականացված»:

5.3

**Բանկային համակարգում կապիվալի ակնկալվող
վերադարձի ցուցանիշի ազդեցությունը
գոկոսադրույքների մակարդակների վրա**

Նախքան կապիվալի ակնկալվող վերադարձի ազդեցությունը գոկոսադրույքների մակարդակի վրա գնահատելը՝ ներկայացնենք հետևյալ պարզեցված հավասարությունը:

$$\text{Return to Portfolio} = \text{Yield} \quad \text{Operation cost ratio} \quad \text{funding cost ratio} \\ \text{Provisioning cost ratio}$$

որբեն՝ Return to Portfolio = զուտ շահույթ/վարկային պորտֆել,

Yield = գոկոսային և կոմիսիոն եկամուտներ/վարկային պորտֆել,

Operation cost ratio = օպերացիոն ծախսեր/վարկային պորտֆել,

Funding cost ratio = գոկոսային և կոմիսիոն ծախսեր/վարկային պորտ., Provisioning cost ratio = պահուաժավորմանն ուղղված ծախսեր/վարկային պորտֆել:

Հավասարության միջոցով դիմումները այն հիմնական ուղիները, որոնցով «օպարերկրյա» բանկերը փորձում են ապահովել կապիվալի վերադարձի ցանկալի մակարդակ:

Այդուսակ 15-ում և 16-ում ներկայացված են վերոբերյալ ցուցանիշների ընթացիկ միտումները:

Այդուսակ 15

Yield և Return to Portfolio (վարեկանացված), %

Բանկեր / Տարեթվեր	2010	2011	2012	2010	2011	2012
	Yield			Return to Portfolio		
ACBA-CREDIT AGRICOLE BANK	17.2%	15.1%	16.6%	2.9%	3.4%	2.1%
HSBC Bank Armenia	11.9%	11.1%	15.1%	3.7%	4.3%	5.9%
Areximbank - Gazprombank Group	11.3%	10.9%	12.3%	0.6%	0.4%	0.4%
VTB Bank (Armenia)	14.4%	13.3%	17.7%	4.0%	3.0%	2.6%
ProCredit Bank	14.0%	15.1%	14.3%	-1.7%	-2.3%	-1.6%
Byblos Bank Armenia	9.8%	9.5%	10.9%	1.0%	1.0%	0.8%
ArmSwissBank	12.8%	11.3%	20.7%	3.5%	3.0%	5.9%
Mellat Bank	4.0%	8.1%	16.4%	0.8%	-4.4%	7.5%
BTA Bank	16.7%	17.0%	19.4%	-0.7%	2.1%	3.0%
Միջին	12%	12%	16%	1.6%	1.2%	3.0%

Աղյուր՝ Բանկերի վերկայթերում հրապարակվող եռամսյակային հաշվետվություններ

ա) Սեփական ես-ի գերակայության բարդույթը: Ցուրաքանչյուր անհապ ի ծնե ինքնին օժբված է սեփական ես-ը ինքնահասպատելու մղումնով: Շոգևոր զարգացման կայացած ինսպիրուվումների շրջանակում այդ մղումը սպանում է հանրային և հանրօգությունը ուղղվածությունը. հոգևոր արժեհամակարգի սպեղծումն ու ինքնազարգացման միկումներն են դաշնում հիմնական: Բայց եթե եսակենքրոնությունը չի կարգավորվում ազգային արժեհամակարգի փիրույթում, ապա փոխվում է դրա գործունեության բնույթը: Վյդ դեպքում հասարակական կեցության բոլոր շերպերին բնորոշ է դաշնում սեփական ես-ի գերակայության բարդույթը:

բ) Սեփական ուժերին չհավատպու և այլ ուժերին ապավինելու անլիարժեքության բարդույթը: Փոխանակ որոշելու, թե մենք ինչ պիտի անենք, մրածում ենք, թե ում օգնությանն ապավինենք: Դրանից անմիջապես կարողանում են օգպվել դրսի ուժերը՝ իրենց կամքը պարփառելով ռազմավարական բազմաթիվ խնդիրներ լուծելիս: Վյդ պարագայում աշխարհաքաղաքական գործոնից վերածվում ենք գործիքի:

գ) Թայֆայականության (կլանայնության) թերարժեքության բարդույթը: Պերականության բացակայությունը հայ մարդկանց հարկադրել է սպեղծելու ինքնապաշտպանական մեխանիզմներ: Բնականաբար, առաջին մակարդակն արյունակցական կապերի միջոցով որոշակի միավորի՝ որպես ինքնապաշտպանական ուրույն համակարգի սպեղծումն է: Շար հաճախ արժեքավորման չափանիշ է համարվում ոչ թե անհապի կարողությունը, այլ նրա պարկանելությունն այս կամ այն համայնքին կամ կլանին: Փոխհարաբերությունների շրջանակի ընդլայնման հետևանքով այդ հոգեբա-

նական միգրումն ունենում է հարվածական դրսւորում (զյումրեցի, վանեցի, լոռեցի, դարաբաղցի, զանգեզուրցի և այլն): Թայֆայականությունն այս կամ այն դրսւորմամբ հարուկ է բոլոր ժողովորդներին, սակայն մեր դեպքում այն, ցավոք, դարձել է գերիշխող վարքագիծ:

¶ Ընդամենքի գերադասումը պետքությանը: Ընդամենքը հայ իրականության մեջ առանձնահարուկ գրեղ է գրավում: Ընդամենքի, ոչ թե պետքության, մեջ ենք գետել մեր ապահովությունը, ինչի հեփևանքով պետքականությունը երկրորդվել է ընդամենքին. առաջին պլանում է ընդամենքը, իեպո միայն՝ պետքությունը և հայրենիքը: Քանի որ առաջնայինը ընդամենքն է, ուստի այն կարելի է սգեղծել նաև հայրենիքից դուրս: Տայրենիքը, նախևառաջ, արժեքային համակարգի կրողն է, որն արդահայրվում է համապարասխան ավանդույթների, սովորույթների, արդարության, կարգուկանոնի, օրենքի գերակայության, մշակութային կյանքի, ազգային նպագակների միջոցով: Իսկ քանի որ դա առաջնային չէ, ուստի կարելի է այն լրել:

Արժեհամակարգի բացակայության պատճառով, երբ հարակեցված չեն հիմնական խնդիրներն ու նպարակները, որոնց հիմքի վրա պետք է սգեղծվի ազգային ծրագիր, չեն գործում ինսփիրուտիվները, հեփևապես՝ գերակա չեն օրենքը, ինչը դառնում է առաջընթացի հիմնական խոչընդունողներից:

Երկրորդ՝ ռուսական գործոնը: համաշխարհային գործեական, ռազմական և քաղաքական մրցակցության ասպարեզում 17–18-րդ դարերում ասպիճանաբար ձևավորվեց մի նոր կենդրոն՝ ի դեմս Ռուսասպանի: Պետրոս Առաջինի բարեփոխումները Ռուսասպանի հեփազա հզորացման հիմքը դարձան: Սակայն հարկ է նշել, որ դրանք իրականացվում էին եվրոպական քաղաքակրթական արժեհամակարգի ազդեցությամբ: Տայերի համար սկսվեց մի նոր շրջափոլ՝ կապված Ռուսասպանի քաղաքական, ռազմական և մշակութային գործունեության հետ: Դա մեր պարմության ամենաճակարագրական փուլերից է, որը, կարծում ենք, նորովի ուսումնասիրության կարիք ունի:

Ռուսասպանի հզորացումը գուգակցվում էր արևմտութրում, արևելքում և հարավում նոր գարածքների գրավմամբ և ազդեցության ընդլայնմամբ: 18–19-րդ դարերում Ռուսասպանը դարձավ Եվրոպայի ազդեցիկ երկրներից մեկը՝ մեծ դեր խաղալով համաշխարհային բոլոր իրադարձություններում: Բնականաբար, Տայասպանը հայտնվեց Ռուսասպանի աշխարհաքաղաքական հեփաքրքրությունների փիրույթում: Ռուսասպանի շահերը պահանջում էին մշակել համապարասխան ռազմավարական

ծրագիր՝ *հայկական գործոնի* օգբազործմամբ Անդրկովկասում փիրապետություն հասպատելու, իսկ հերազայում նաև Միջերկրական ծով դուրս գալու նպատակով:

Մեր փարածաշրջանում Ռուսասպանի քաղաքական ազդեցության շրջանը համընկավ Հայասպանի համար շատ ծանր ժամանակահապվածի հետք: Այսպես կարևոր է առանձնացնել հետևյալ հանգամանքները. 1) Վրդեն մի քանի դար (1375 թ. Կիլիկիայի հայկական թագավորության անկումից) Հայասպանը չուներ պետականություն, 2) Բյուզանդական կայսրության կործանումից (1453 թ.) հետո Փոքր Ասիայի և Հայասպանի փարածքներում հասպարվեց թուրքական պետությունը, որն ասդիմանաբար հզորանալով՝ ավելի ու ավելի էր ընդլայնում ազդեցության սահմանները:

Ռուսասպանի քաղաքական վերնախավը, լավ ուսումնասիրելով մեր փարածաշրջանի կացությունը և օգբվելով վերոնշյալ հանգամանքներից, օգբագործում է հայկական գործոնը իր աշխարհաքաղաքական խնդիրները լուծելու համար: Այդ են վկայում պարմական փասթերը: Մասնավորապես՝ 18-րդ դարի սկզբներին Ռուսասպանը կարողացավ օգբագործել Իրանի թուլացումը և վճռական քայլեր ծեռնարկեց Կասպից ծովի արևմտյան և հարավային ափերը գրավելու ուղղությամբ⁸⁷: Ելեկով դրանից՝ Թուրքիան Ռուսասպանի առաջնադաշտում կասեցնելու համար պատերազմներ սկսեց Արևելքում, և Ռուսասպանը, հաշվի առնելով պատերազմելու դժվարությունները, 1724 թ. հուլիսի 12-ին Կ. Պոլսում կնքեց պայմանագիր, ըստ որի՝ Թուրքիան ճանաչեց Ռուսասպանի իրավունքներն Իրանի մերձկասավյան շրջաններում, իսկ Ռուսասպանը, փոխադարձաբար, Թուրքիայի իրավունքները՝ Իրանի այսրկովկասյան փիրույթների նկատմամբ⁸⁸: Այդ ժամանակներից սկսվում է հայկական գործոնի օգբագործումը Ռուսասպանի կողմից. հետևում է կորուսպների անվերջանալի շղթան, որը շարունակվում է մինչև օրս:

1915 թ. հուլիսի 11-ին ընդհանուր նահանջի իրամանը՝ թողնել ազարագրված փարածքները և Վանը, ընդվզում առաջացրել հայկական կամավորական ջոկապների իրամանափարների շրջանում⁸⁹: Անդրանիկը զայրույթով նշում է, որ այս նահանջը կապարյալ կերծիք է, որի նպատակը Հայասպանն առանց հայերի թողնելն է⁹⁰: Ավ. Հարությունյանը գրում է.

⁸⁷ Սփեփանյան Գ., Բարվի նահանջի հայությունը 19-րդ դարի երկրորդ կեսին (պարմաժողովրդական ուսումնասիրություն), Երևան, 2010, էջ 33:

⁸⁸ Զոլավյան Մ., Հայ ժողովրդի պարմության հարցերը ըստ եվրոպական հետինակների (13-18-րդ դարեր), գիրք Ա, քաղաքական պարմություն, Երևան, 1990, էջ 195-197:

⁸⁹ Մելքոնյան Ա., Ուշացրավ աշխաբություն. Ֆեռնոր Ելիսեն. «Կազակները Կովկասյան ճակապում 1914-1917», ԲԴԱ, Երևան, 2004, N 1, էջ 176:

⁹⁰ Զօրավար Անդրանիկի կովկասան ճակապի պարմական օրագրութիւնը (1914-1917). օրագրուած գորավարին թիկնապահ զինվորեն, Պոսթոն, 1924, էջ 35:

«Անառարկելի փասփերի գրամաբանական համադրումը և գիտական վերլուծությունը մեզ բերում է ճշմարդացի մի համոզման, որ ռուսական բանակի նահանջը եղել է նախօրոք կազմակերպված և մրածված... Վանի հայկական կառավարությունը ցարիզմի աչքի փուշն էր, նա մյուս վայրերում հայերին կառավարման ոչ մի իրավունք չէր փել Այդ նահանջն առաջին հերթին ուղղված էր Վասպուրականի հայերի ու նրա կառավարության դեմ...»⁹¹:

Ընդհանուր նահանջի հրամանը ծանր հեփսանքներ ունեցավ արևմտահայության համար⁹²: Ռուսական քաղաքականության էությունն հայ իրականության մեջ ավելի հսկակ է դառնում թուրքական գործոնի համապեթսպում:

Երրորդ՝ Թուրքական գործոնը: Հայոց պալմագիրության մեջ թուրքական գործոնը գրեթե միշտ ներկայացվել է միակողմանի⁹³:

Նայ ժողովրդի նկարմամբ թուրքական իշխանությունների վերաբերմունքը էականորեն պայմանավորված է Արևմտապրի և Ռուսասպանի շահերի բախմամբ: Անիրաժեշտ են ավելի իրավեսական վերլուծություններ խորքային գործընթացներն ընկալելու և հայոց մեծ ողբերգությունը ձիշտ գնահատելու համար: Դա պետք է դիմարկել այն կորուսպների պարագաների օրյեկտիվ գնահարման համապեթսպում, որ կրել ենք Առաջին համաշխարհային պարերազմի սկզբից մինչև 1923 թ. և կրում ենք մինչև օրս: Այդ առումով, հարկ է խնդիրն ուսումնասիրել Թուրքիա-Ռուսասպան, Թուրքիա-Արևմտապրի և Հայասպան-Թուրքիա փոխհարաբերությունների շրջանակներում՝ այսպես փնտրելով երրորդի ճիշտ լուծումը:

Ռուսասպանը հայոց քաղաքական ընկալումներում, ընդհանուր առմամբ, առկա է որպես մշտական բարեկամ: Վյուամենայնիվ, կան ինչպես ԵՄ-ին, այնպես էլ ՄՄ-ին ՀՀ անդամակցության կողմնակիցներ, ովքեր անկեղծորեն փորձում են հաշվեկշռել համապարասխան լուծման օգուտներն ու վնասները՝ ենելով մեր անկախ պետականության հրամայականից: Դրանց սահմանազարումը այլ քննարկման նյութ է: Այս պա-

⁹¹ Տարությունյան Ա., Վան-Վասպուրականի ազգաբնակչության մեծ գաղթը. Պարագաները, ընթացքը, հերթակները և պարախամապրկության խնդիրները: Հայասպանի մայրաքարենքը, գիրք Ա. Վան քաղաքի առաջին հիշարքակության 2865-ամյակին նվիրված միշտազային գիտաժողովի նյութերի ժողովածու, 7-9 հոկտեմբերի 2010 թ.), Երևան 2013, էջ 191, 195:

⁹² Լագեան Գ., Հայասպան և Հայ Դարձ հայ և ռուս յարաբերութիւններուն լոյսին փակ, Երևան, 1991, էջ 182:

⁹³ Վշով Ներփակյան, Հայոց պարմության որոշ դրվագների բուհական դասավանդման վերանայման հարցը կրթության որակի համապեթսպում, Մասնագիրական կրթության որակի ապահովման արդի հիմնավանդիրները. միշտազային գիրաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 217 - 224: Նոյնի՞ Հայոց ցեղասպանության պարագաներն ու դասեր, Կրթական բարեփոխումներ. ազգային լավագույն ավանդությունները և միշտազային առաջավիր փորձը (գիրական նախադրչանի նյութեր), Երևան, 2010, էջ 5 - 10: Նոյնի՞ Հայ թեղափոխական Դաշնակցութեան պարմութիւն/ 1908 - 1918/, Բեյրութ, 2013:

բազայում կարևոր է ճշգրիտ, թե Ռուսասփանը հակաթուրքական քաղաքանության մեջ մեզ ինչ դեր է հավկացրել:

19-րդ դարի սկզբներից սկսած՝ Ռուսասփանը փորձում էր իշխել դեպի Միջերկրական: Վյդ խնդիրը լուծելու համար նա օգտագործեց, այս պես կոչված, Թուրքիայի կողմից քրիստոնյա ազգերին, այդ թվում՝ արևմտահայությանը փրկելու թեզը: Սակայն ամեն անգամ հայությունը կանգնում էր «կողրած դաշտակի» առաջ. ընդամենը բորբոքվում էր հայթուրքական թշնամանքը: Դա դեղի ունեցավ թե՛ 1806–12 թթ., թե՛ 1828–29 թթ. և թե՛ 1877–78 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո, երբ ռուսական ռազմական հաղթանակներին հաջորդում էր դիվանագիրական պարբությունը: Բնականաբար, Արևմուտքը և հարկապես Անգլիան, հաշվի առնելով Ռուսասփանի այդ նկրպումները, այդ թվում՝ նեղուցների գրավման վեցանգը, պաշտպանեցին Թուրքիային, և նման առաջխաղացման մեջ հիմնականում Անգլիան հանդես եկավ Թուրքիային աջակցողի դերում: Վյդ պայմաններում Թուրքիան արևմտահայությանը ընկալում էր որպես անվասփելի դարր, թեպետ, հարկ է նշել, որ Վերջինս քննիքական և քաղաքական լուրջ կշիռ ուներ այդ երկրում. սրբեղծված իրավիճակում ավելի ճիշդ կիմներ չեզոքություն պահպանելը:

Վյախտով՝ հայությանը օգտագործելու քաղաքականությամբ, Ռուսասփանը նպաստում էր Թուրքիայի կողմից հետքագա ոճրագործությունների կափարմանը: Նեփևապես՝ ցեղասպանության պատճառները պետք է փնտրել նաև 19-րդ դարում դեղի ունեցող Ռուսասփան-Թուրքիա-Արևմուտք փոխհարաբերության շրջանակներում: Վյդ ժամանակ էր, որ Էրգրումը Թուրքիային հանձնելուց հետո՝ 1830 թ., դեղի բնակչությունից 30000 հայեր սրբազնաբար լքեցին իրենց հայրենիքը և գաղթեցին Ախալքալաք ու Ծալկա: Վյս նույն երևույթը շարունակվեց Բեռլինի կոնգրեսից հետո:

1890-ական թթ. առաջին կեսերի ազգային-ազարագրական շարժումները հովանավորում էր Ռուսասփանը: Թուրքիան, բնականաբար, ռուսական ճնշումներին դիմակայելու համար սրացավ Արևմուտքի աջակցությունը, քանի որ Վերջինս թույլ չէր դա Թուրքիայի մասնաբումը՝ հօգուտ Ռուսասփանի: Օգրվելով դրանից՝ Թուրքիան կազմակերպեց արևմտահայության առաջին զանգվածային ջարդերը: Պատահական չէ, որ դրանք դեղի ունեցան հենց այս շրջանում:

Առաջին համաշխարհային պատերազմի դարիներին հայությունը պետք է որդեգրեր չեզոքության քաղաքականություն և սպասեր պատերազմի ավարտին: Պատերազմի ժամանակ չեզոքության պահպանումը արևմտահայության անվանության հիմնական երաշխիքն էր:

Առաջին աշխարհամարդից հետո քաղաքական իրավիճակը փոխվեց, և արդեն բոլշևիկյան Ռուսաստանը, դաշնակցելով Թուրքիայի հետ, նպաստեց վերջինիս հզորացմանը: Վյունքն՝ այս անգամ ռուսները փորձեցին օգրագործել թուրքական գործոնը՝ նեղուցներից դաշնակիցներին քշելու նպատակով: Բացի դրանից, 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային հանձնեց Կարսն ու Վրդահանը: Սկզի պայմանագրի կնքումից հետո (1920 թ. օգոստոսի 10) հայ քաղաքական առաջնորդները շարունակում էին հավաքալ Սդրա իրագործմանը: Հայաստանի անկախությունը ցանկալի էր Արևմուտքին: Հայ քաղաքական դեկավարները չկարողացան ճիշդ գնահատել սրեղծված իրավիճակը, որը դարձավ մեծ կորուսկների հիմնական պատճառներից մեկը: Արևմուտքը, ի հակակշիռ Ռուսաստանի, աջակցում էր Թուրքիային՝ ցանկանալով բարելավել հայ-թուրքական հարաբերությունները: Այդ դեպքում հնարավոր էր խուսափել 1920 թ. թուրքական պարերագմից:

Այսպիսով՝ կարևոր խնդիր է Թուրքիայի հետ հարաբերություններում հայկական գործոնը մեծ գործությունների շահարկումների առարկա չդարձնելը, մի բան, որ դեռևս չի հաջողվում ապահովել:

Վերոնշյալ գործոնների վերլուծության համարեքարում պարզ է դառնում, որ Հայաստանի զարգացման ամենաարդյունավել ուղին հայկական կողմնորոշումն է: Այդ եկակերպից պետք է դիմարկել ռազմավարական, հետևապես՝ ինքնեգրման խնդրի լուծումը: Ըստ այդմ՝ հարկ է առաջնորդվել հերթևայլ հիմնարար սկզբունքներով.

- ա)** Առանց պարմական դեպքերի և իրադարձությունների պարմաների ճշմարիկ ու բազմակողմանի վերլուծության հնարավոր չէ պարզել վնդեսական, քաղաքական, ռազմական համագործակցության ուղղությունները:
- բ)** Անհրաժեշտ է հրաժարվել միավեկոր համագործակցության քաղաքականությունից: Մասնավորապես՝ դա վերաբերում է ռազմաքաղաքական և վնդեսական համագործակցությանը:
- գ)** Եթե անգամ ներկայումս հնարավոր չէ խուսափել Մաքսային միության հետ համագործակցությունից, ապա դա չպետք է դիմել որպես վերջնական նպատակ, այլ հանգրվան, քանի որ դժվար է կանխարեւել աշխարհաբարդարական երևոյթների հերթագա ընթացքը:
- դ)** Անհրաժեշտ է զարգացնել համագործակցությունը Իրանի հետ, որովհետև դա այն կարևոր այլընդունքներից է, որը հնարավորություն կտա պահպանելու հայկական գործոնի դերը մեր գարածաշրջանում ինչպես վնդեսական, այնպես էլ աշխարհաքաղաքական առումով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացումը միշտ համալիր բնույթի բազմաշերտ գործընթաց է, հեփսարար՝ գնդեսական զարգացումն անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն գնդեսական, այլև արդարնդեսական գրաբանույթ նպարակների, միջավայրերի ու գործոնների հետ փոխազդեցության վիրույթում։ Այս մոդեռնում նպարակահարմաք է կիրառել հավկապես գնդեսական զարգացման ռազմավարությունը մշակելիս և իրականացնելիս։

Տնդեսական զարգացումը դիմամիկ առաջընթաց է, որի շնորհիվ գեղի են ունենում երկրի ողջ բնակչության ինքնուրույն կենսապահովման կարողությունների մեծացում (դրանց ընդլայնման, նորացման և բազմազանեցման ճանապարհով), դրա հիմնան վրա՝ կենսապայմանների և ապրելակերպի ընդհանուր բարելավում, ինչպես նաև սրեղծվում են մարդկային ներուժի լիարժեք իրացման նպարավոր նախադրյալներ։

Երկրի զարգացման նվաճումների կամ ձախողումների մեջ պետության դերը հանգուցային է՝ դրական կամ բացասական։ Դա պայմանավորված է պետության առաջարար մասնակցությամբ զարգացման գործընթացների կազմակերպմանը և պայմանների սրեղծմանը, ռազմավարության և քաղաքականության մշակմանը, ուղղորդմանը և իրագործմանը։ Նեփսարար՝ պետության այս կամ այն ազդեցությունը զարգացման բնութագրերի վրա վճռորոշող է։

Ընդհանուր զարգացման համարեքսպում գնդեսական զարգացման գեղի ու դերի իմաստավորման հարցում արդիական է շրջադարձային փոփոխությունը՝ «գնդեսական զարգացումը գերակա է հասարակական կյանքի մյուս ոլորդների նկարմամբ» մրայնությունից անցում կապարելով հեփսյալ ընկալմանը՝ «գնդեսական զարգացումը որքան էլ կարևոր, սակայն ընդհամենը միջոց է, իսկ վերջնանպարակները գնդեսականի համեմատությամբ ավելի բարձրակարգ են»։ Ընդհանուր առմամբ, խոսքը մարդկային զարգացման մասին է՝ որպես զարգացումն իմաստավորող ամփոփ հայեցակարգի։

Իրական զարգացումը մարդկային կապիտալի, ինչպես նաև սոցիալական կապիտալի մեծացման և օգտագործման գործընթաց է, ուստի առկա բացասական միգրումների բեկման և երկարաժամկետ կայուն զարգացում երաշխավորելու առումով նպարակահարմաք է ՀՀ գնդեսական զարգացման ռազմավարությունը կառուցել ըստ գնդեսության սոցիալ-շուկայական մոդելի։

Զարգացման համարեքսպում գիրության վրա հիմնված գնդեսությունը պահանջում է պետության մշրական միջամտություն արդարությանը և լայն օգտագործման գեխնոլոգիաների գրածմանը։ Այդ նպա-

փակով Հայաստանի Հանրապետությունում պետք է սպեղծվի զարգացման հաստիագությունների գործող ցանց, որոնց գործունեությունը կհամակարգեն պետական գործակալությունները: Մրցակցային շուկաները, ինչպես նաև արդյունաբերական քաղաքականությունը կմնան նրա զիսավոր փարբերը, բայց կենքրոնական դեր չեն խաղա: Զարգացող երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար գեիսնուղիական նմանակման շնորհիվ որոշակի հնարավորություն է ընձեռվում ավելի մոդեռնալ զարգացած երկրներին՝ գեիսնուղիականերում առաջարար երկրների կարարած լայնամաշվար ներդրումների շնորհիվ:

Հայաստանի Հանրապետության Ազգային նորասպեղծական համակարգի ձևավորման ու զարգացման խնդրի բարենպաստ լուծումը ենթադրում է մակրուղնային քաղաքականության որոշակի վերակողմնորշում և շեշտադրումների փոփոխություն, մասնավորապես, կայունացման քաղաքականությունից անցում զարգացման քաղաքականությանը: Վյու ենթադրեքսպում համապատասխան մակրոփոնային գործիքների կիրառությունը ենթադրում է.

- ա)** Համապատասխան օրենսդրական և ինսպիրուցիոնալ մեխանիզմների ներդրուման միջոցով միջազգային չափանիշներին համապատասխանող մրցակցային քաղաքականության արմագավորում և հակամենաշնորհային օրենսդրության ձևավորում ու կիրառություն:
- բ)** Հարկային արգունությունների գրամադրում, մասնավորապես՝ ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով գնդեսավարողներին որոշակի արձակուրդների գրամադրում, արգոնյալ պետական-բյուջենպային վարկավորում՝ պետական նպագակային-ծրագրային ֆինանսավորման շրջանակներում հետազոտական ծրագրերի գծով:
- գ)** Նորաապեղծական շղթայի օդակների ու մասնակիցների միջև համագործակցության ու կոռպերացման խթանների ձևավորում, մասնավորապես՝ պետության կողմից որոշակի համաֆինանսավորման սիենամների գործադրում այն հետազոտական-նորամուծային նախագծերի համար, որոնք համապատասխանում են պետականորեն սահմանված՝ գիրության զարգացման գերակա ուղղություններին:
- դ)** Էվոլյուցիոն դրամավարկային քաղաքականության սկզբունքների գործադրում և ռազմավարական նշանակության նորամուծային ծրագրերի վարկավորման մեջ դրամավարկային անուղղակի խթանման գործիքների կիրառություն՝ այդ նպագակով սպեղծելով համապատասխան վարկային հասպատություններ (զար-

գացման բանկեր, պետքական մասնակցությամբ խառը ներդրումային կամ վենչուրային հիմնադրամներ և այլն):

- ե)** Ազգային նորամուծային համակարգի ձևավորման ու գարգացման ծրագրի շրջանակներում անհրաժեշտ է վերանայել փոքր ու միջին գործարարության պետքական աջակցության հայեցակարգը՝ արդիոնյալ ֆինանսավորման ու վարկավորման շեշտադրումները գեղաշարժելով առավելապես դեպի փոքր նորամուծային և գեխնուլոգիական ընկերությունների աջակցման ծրագրերը, որոնք ռազմավարական գարգացման ու աճի մեծ ներուժով հանդերձ, առանձնանում են բարձր ռիսկայնությամբ:
- գ)** Մրգավոր սեփականության օբյեկտների ու գեխնուլոգիաների ներքին և միջազգային փոխանցման արդյունավետությունը մեծացնելու նպարակով անհրաժեշտ է էավել միասնականացնել և պարզեցնել պետքական ֆինանսավորմամբ սպեհծված մրգավոր սեփականության օբյեկտների արդյունագրման ընթացակարգերը: Հավաքապես այս դեպքում պետքությունը պետք է գործուն դերակարգարություն ունենա այդ օբյեկտների առևտության աշխատավայրացմանն ու շուկայական առաջխաղացմանն ուղղված ներդրումային ծրագրերի օժանդակության հարցում:
- դ)** Պետքությունանական հավաքածու համագործակցությունը գարգացման քաղաքականության համապերսպում կարող է փեղի ունենալ ոչ միայն ուղղակի ֆինանսական աջակցության, այլև պետքական որոշակի ծառայություններ մաքրությունը միջոցով, ինչը նաև կարահնանափակի նորասփեղծական ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը:
- ե)** Արդյունաբերական քաղաքականության մոդելի ընդունությունը ու նրա շրջանակների հսկակեցումը պետք է խարսխաված լինեն երկրում պետքականորեն ձևավորված մասնավոր և հանրային շահերի օպդիմալ համադրության վրա: Դիրքավորման այդօրինակ գուգորդումը պետք է ապահովվի երկու կողմերի շահերի լավագույն փոխարացման սկզբունքով:
- թ)** Արդյունաբերական քաղաքականության շրջանակներում իրականացվող կառուցվածքային բարեկավումները չպետք է գերազանցապես հիմնված լինեն ճյուղային գերակայությունների վրա: Քաղաքականությունը պետք է ներառի ինչպես ճյուղային (ուղղաձիգ) այնպես էլ փարածքային (հորիզոնական) կառուցվածքները՝ ծրագրային հենքի վրա: Այդկերպ պետքությունը պետք է ինսփրիվությունալ աջակցություն ապահովվի մրցունակ և որակյալ նորասփեղծական քաղաքականությունների առաջացմանը և գարգացմանը:

Ինովացիոն գնդեսությանը ԱՊՀ երկրների ինփեգրման հիմնախնդիրները լուծելու համար առաջարկում ենք միջոցառումների հետևյալ համալիրը՝

- բարձրացնել գիտելիքահենքության մակարդակը, մասնավորապես՝ ավելացնել գիտական հետազոտություններին և մշակումներին հարկացվող ծախսերի մասնաբաժինը ՇՎՀ-ում,
- գիտագրեխնիկական գործունեության կարևոր ուղղություններին հարկացվող հարկացվող ծախսերը բաշխել հնարավորինս ռացիոնալ,
- հետազոտությունների և մշակումների համար կարարվող ծախսերում ավելացնել բյուջեգրային ֆինանսավորման մասնաբաժինը,
- հետազոտությունների և մշակումների համար կարարվող ծախսերում ավելացնել սարքավորումների ձեռքբերմանն ուղղված ծախսերի մասնաբաժինը,
- ձեռնարկել միջոցառումներ գիտահետազոտական մշակումների առևտուրայնացման նպատակով,
- բարձրացնել գիտության բնագավառում միջին ամսական անվանական աշխատավարձը,
- կարարել համագեղ ներդրումներ, որոնք հնարավորություն կրան միավորելու ԱՊՀ անդամ երկրների ոչ լիարժեք օգգագործվող ֆինանսական և աշխատանքային ռեսուրսները:

Անհրաժեշտ է համակողմանիորեն գնահատել քաղաքական կայունության ցուցիչների վրա ազդող գործունները և բացահայտել, թե դրանցից որոնք են առավել ներգործուն գնդեսական զարգացման վրա:

Կարարված գնահատման արդյունքները թույլ կրան կազմել ինստիտուցիոնալ վերափոխումների ծրագիր, որն ուղղված կլինի բացահայտված թերությունների մեղմմանը կամ վերացմանը:

Սույն հետազոտության շրջանակներում օգբագործելով Երբ-Հարվեյ-Վիսկանդրայի մոդելի մեթոդաբանությունը՝ Հայաստանի վարկային ույելիքների հիման վրա գնահատվել է, որ օգարերկրյա ներդրումների դիմաց կապիտալի ակնկալվող վերադարձի ցուցանիշը կազմում է 16.32%, որը ըստ էռթյան բարձր ցուցանիշ է, և Հայաստանի գնդեսության սահմանափակ քանակով ճյուղեր կարող են ապահովել կիսամյակային կրավագանք նման ցուցանիշ: Այս ցուցանիշը համադրվել է Հայաստանի բանկային համակարգում օգարերկրյա մասնակցությամբ բանկերի՝ կապիտալի վերադարձի ընթացիկ ցուցանիշների միջումների հետ:

Վերլուծության արդյունքում կարարվել են հետևյալ եզրահանգումները:

Առաջին, օգարերկրյա ներդրողները Հայաստանի գնդեսությունը համարում են բավական ռիսկային: Երկրորդ, Հայաստանի բանկային համակարգը գնդեսության այն ճյուղերից է, որին օգարերկրյա մասնակցությունը գերակշռում է: Ընդ որում, օգարերկրյա սեփականության ներկայությունն իր հետք բերել է նաև կառավարման ժամանակակից մոդեցումներ և աշխարհումի ներուժի օգդագործման առավել բարձր արդյունավետություն: Երրորդ, օգարերկրյա մասնակցությամբ բանկերի կապիտալի վերադարձի ցուցանիշները դեռևս չեն բավարարում ներդրողների սպասումներին, դրսորում են խիստ գրադանողականություն: Չորրորդ, 2010–2012 թթ. ընթացքում բանկերի վարկային պորտֆելների եկամբարերությունն աճել է՝ հիմնականում պայմանավորված կոմիսիոն եկամուգմերի աճով: Դինգերորդ, պետք է ակնկալել, որ քիչ հավանական է, թե վարկային պորտուկպների գոլկոսադրույքները (խոսքը չի վերաբերում անվանական գոլկոսադրույքներին) նվազեն, քանի դեռ ֆինանսական միջնորդության մակարդակը Հայաստանում էսաբս չբարձրանա և Հայաստանը չբարելավի իր վարկային ռեյֆինանսները և ընկալվի որպես ավելի նվազ ռիսկայնությամբ երկիր:

Ներկայում գնդեսական զարգացման անհրաժեշտ մակարդակ հնարավոր է ապահովել միայն գարբեր երկրների հետք համագործակցությամբ: Վյլապես՝ վերոնշյալ կարևոր հիմնախնդիրների լուծումը գրեթե անհնարին կդառնա: Տվյալ համագերասպում հրաժանակ գնդեսության ուղղությունների ճշգրիտում՝ գնդեսական ինքնուրության որոշակի համակարգին անդամակցելու առումով: Գոյություն ունեն գարբեր մոդեցումներ Մաքսային միությանը կամ Եվրոմիությանը ինքնուրությունը նպատակահարմարության հարցում:

ՄՄ-ն անդամակցելու առումով առաջանում են հետևյալ խնդիրները. հումքի արդահանմանը վրա հիմնված գնդեսություններ, Էներգակիրների ռուսաստանյան մենաշնորհ, անհամաշափ զարգացող գնդեսական ինքնուրություններ, Ռուսաստանի պարփակրած առփրային քաղաքականություն, պարփակրած՝ ավելի քաղաքական, քան գնդեսական միություն:

Հայաստանի Հանրապետության ՄՄ-ին անդամագրվելը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով. Հայաստանի անվտանգությունը, Հայաստանի գնդեսական իրավիճակը, գնդեսական զարգացման համար նպաստավոր պայմանների սպեհումը, ավելի էժան Էներգակիրներ սպանալու հնարավորությունը:

ԵՄ-ին Հայաստանի Հանրապետության անդամագրվելը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով. Եվրոմիությունը, Մաքսային միության համեմատությամբ, կայացած համակարգ է, ապացուցել է իր արդյունավետությունը, ԵՄ-ն ունի բարձր գեիմնոլոգիաների վրա հիմնված գնդեսու-

թյուն, ԵՄ-ում ինսպիրուցիոնալ համակարգը կայացած է և գործում է արդյունավետորեն, անդամագրվելու դեպքում նախագիծն ավարտվում է Հայաստանի և ԵՄ-ի միջև մաքսագույքերի ազատականացում, կերպագիտությող գնդեսությունները ունեն ֆինանսական օժանդակության կարիք, որի սպացման հնարավորություններն ավելի մեծ են ԵՄ-ից, քան ՄՄ-ից:

Այս երկընդունակում կողմնորոշվելու համար կարևոր է ոչ միայն գնդեսական, այլև ոչ գնդեսական բազմաթիվ գործոնների գնահապումը, որոնք առանցքային դեր ունեն ինքնուրությունները առնչվող բազում խնդիրների պարզաբանման համար: Տակառակ դեպքում՝ միայն գնդեսագիտական վերլուծությունների հիմքով սահմանափակված առաջարկությունները կմնան ընդամենը բարի ցանկություններ: Դույժ հրագրապ է քաղաքակրթական, գրածառաջրջանային, հոգևոր-մշակութային խնդիրների պարզաբանմանը: Կարևորվ են հագուստագույն ելանական քաղաքակրթության ազդեցությունը, ռուսական և թուրքական գործոնների դերը հայաստանյան իրականության և ապագա զարգացման գնահապումների առումով:

Վերոնշյալ գործոնների վերլուծության համապեճսպում պարզ է դառնում, որ Հայաստանի զարգացման ամենաարդյունավետ ուղին հայկական կողմնորոշումն է: Տեսն այդ ելակետից պես է դիմուրկել ռազմական, հետևապես՝ նաև ինքնուրությունների լուծումը: Ըստ այդմ՝ հարկ է առաջնորդվել հետևյալ հիմնարար սկզբունքներով:

- ա)** Առանց պարմական դեպքերի և իրադարձությունների պարմաների ճշմարիք ու բազմակողմանի վերլուծության՝ հնարավոր չէ պարզել գնդեսական, քաղաքական, ռազմական համագործակցության ուղղությունները:
- բ)** Անհրաժեշտ է իրաժարվել միավեկոր համագործակցության քաղաքականությունից: Աննից առաջ դա վերաբերում է ռազմական համագործակցության և գնդեսական համագործակցությանը:
- գ)** Եթե անգամ ներկայումս հնարավոր չէ խուսափել Մաքսային միության հետ համագործակցությունից, ապա դա հարկավոր է դիմել ոչ թե որպես վերջնական նպատակ, այլ հանգրվան, քանի որ դժվար է կանխարկել աշխարհաքաղաքական երևույթների հետագա ընթացքը:
- դ)** Անհրաժեշտ է զարգացնել համագործակցությունը Իրանի հետ. դա այն կարևոր այլընդունքներից է, որը հնարավորություն կպատճառական հայկական գործոնի դերը մեր գրածառաջրջանում ինչպես գնդեսական, այնպես էլ աշխարհաքաղաքական առումով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Զուլայշան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ Եվրոպական հետինակների (13–18-րդ դարեր), գիրք Ա, քաղաքական պատմություն, Երևան, 1990, էջ 195–197:
2. **Լազեան Գ.**, Հայաստան և Հայ Դատը հայ և ոռու յարաբերություններուն լոյսին տակ, Երևան, 1991:
3. Հարությունյան Ա., Վան-Վասպորտականի ազգաքնակչության մեծ գաղթը. Պատճառները, ընթացքը, հետևանքները և պատասխանատվության խնդիրը: Հայաստանի մայրաքաղաքները, գիրք Ա, Վան (Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7–8 հոկտեմբեր, 2010 թ.) նյութերի ժողովածու), Երևան 2013:
4. Զօրավար Անդրանիկի կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը (1914–1917). Օրագրուած զորավարին թիվնապահ զինուորէն, Պոստոն, 1924:
5. «Հայաստանի Ազգային Մրցունակության Զեկույց 2011–2011թ.թ.»
Կառավարման պրակտիկայի բարեկավման օրակարգը», «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, www.ev.am, 2012թ.
6. ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների բազա www.databank.cba.am.
7. «Համաշխարհային մրցունակության 2013–2014 զեկույց» Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2013թ.
8. Մելքոնյան Ա., Ուշագրավ աշխատություն. Ֆեռոյոր Ելիսեև. «Կազակները Կովկասյան ճակատում 1914–1917», ԲՀԱ, Երևան, 2004, N 1, էջ 176:
9. **Ներսիսյան Ա.**, Հայոց պատմության որոշ դրվագների բուհական դասավանդման վերանայման հարցը կրթության որակի համատեքստում, մասնագիտական կրթության որակի ապահովման արդի հիմնախնդիրները. միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 217 – 224: Նոյնի՝ Հայոց ցեղասպանության պատճառներն ու դասերը, Կրթական բարեփոխումներ. ³զգային լավագույն ավանդույթները և միջազգային առաջավոր փորձը (Հիտական նախարարական նյութեր), Երևան, 2010, էջ 5–10: Նոյնի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութիւն /1908 – 1918/, Բեյրութ, 2013:
10. Պլուտարքոս, Երկեր, Եր., «Հայաստան», 1988:
11. Ստեփանյան Գ., Բարվի նահանգի հայությունը 19-րդ դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդական ուսումնասիրություն), Երևան, 2010:
12. «Փինանսական Կայունության հաշվետվություն 2012 թ.», ՀՀ Կենտրոնական Բանկ:
13. **Дынкин А., Иванова Н.**, Инновационная динамика: глобальные тенденции и Россия // Проблемы теории и практики управления.-2008.
14. **Корнаи Я.** Инновации и динамизм: взаимосвязь систем и технического прогресса. Вопросы экономики, 2012, N 4.
15. **Миль Дж.**, Основы политической экономии. М., т. 1, „Прогресс”, 1980.
16. **Полтерович В.**, Гипотеза об инновационной паузе и стратегия модернизации. Вопросы экономики, N 6, 2009.
17. **Шумпетер Й.**, Теория экономического развития. М., „Прогресс”, 1982.
18. **Маевский В.**, “Введение в эволюционную макроэкономику”, М. 1997.

19. **16. Alesina, Alberto; Ozler, Sule; Roubini, Nouriel; Swagel, Philip.**, "Political Instability and Economic Growth," working paper, W4173, National Bureau of Economic Research, 1992.
20. **Ali, M.**, Political Instability, Policy Uncertainty, and Economic Growth: An Empirical Investigation, JEL O17, O40, P51; Atlantic Econ. J., 29(1): pp. 87–106, Mar. 01.
21. **Barro, R. J.** (1991) Economic growth in a cross-section of countries. The Quarterly Journal of Economics, 106, 407– 443.
22. **Alesina, A. and Perotti, R.** (1996) Income distribution, political instability and investment.
23. European Economic Review, 40, 1203– 1228.

24. **Baumol W.**, *Entrepreneurship: Productive, Unproductive and Destructive*. Journal of Political Economy, Vol. 98(5), 1990.
25. **Bresnahan T.F.**, Trajtenberg M.N. General Purpose Technologies: Engines of Growth? // Journal of Econometrics. 1995. Vol. 65, No 1.
26. "Capital asset prices: A theory of market equilibrium under conditions of risk", Sharpe, William, Journal of Finance, 1964.
27. "Capital market equilibrium with restricted borrowing", Black, Fisher, Journal of Business; 1972
28. **Bradford DeLong J.**, Inequality on the Horizon of Need. www.project-syndicate.org. May 30, 2013.
29. **Carlaw K.I. , Lipsey R.G.**, The Past, Present and Future of the GPT -Driven Modern ICT Revolution: Blue Report, 2007
www.sfu.ca/rlipsey/PDFs/Blue_Report.pdf.
30. **Carmignani F.**, POLITICAL INSTABILITY, UNCERTAINTY AND ECONOMICS, JOURNAL OF ECONOMIC SURVEYS Vol. 17, No. 1, 0950-0804/03/01 0001–54, Blackwell Publishing Ltd. 2003, 9600 Garsington Road, Oxford, OX4 2DQ, UK.
31. „Country Risk in Asset Pricing Tests”, Ferson, Wayne and Harvey; Working Paper, Duke University 1995.
32. „Expected Returns and Volatility in 135 Countries”, C.B. Erb, C.R. Harvey and T. E. Viskanta, Spring 1996.
33. **Gupta D.**, *The Economics of Political Violence*, New York, NY: Praeger, 1990.
34. **Helpman E.**, /General Purpose Technologies and Economic Growth. 1998. /Cambridge, Mass.: The MIT Press.
35. "International Cost of Capital and Risk Calculator", Campbell R. Harvey, 2001.
36. **Keynes J.**, *The General Theory of Employment, Interest, and Money*. A Harvest Book, Harcourt Brace & Company, 1991.
37. **Myrdal G.**, Prize Lecture: The Equality Issue in World Development. Nobelprize.org. Nobel Media AB 2013. Web. 19 Aug 2013. http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html
38. **North D.**, The New Institutional Economics and Development, www.deu.edu.tr
39. **Reinhart C.M., Rogoff K.S.**, Banking Crises: An Equal Opportunity Menace.// NBER Worcing paper. 2008. No. 14587. **Stiglitz J.**, Employment, Social Justice and Societal Well-being. International Labour Review, 2002, NI-2.

- „Risk, Return and Equilibrium: Empirical Tests”; Fama, Eugene and MacBeth; Journal of Political Economy, 1973.
40. **Theodore W.**, Schultz-Prize Lecture: The Economics of Being Poor. Nobelprize.org. Nobel Media AB 2013. Web. 19 Aug 2013.
 41. http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1979/schultz-lecture.html
 42. „Testing International Asset Pricing: Some Pessimistic Views.”, **Solnik Bruno**, Journal of Finance, 1977.
 43. **Todaro M.**, Economic Development. Addison-Wesley Publishing Company, 1996, 6th ed.
 44. World Bank, World Development Report, 1991 (New York: Oxford University Press, 1991).
 45. http://www.strf.ru/material.aspx?CatalogId=223&d_no=19976
 46. <http://www.gipp.ru/viewer.php?id=34341>
 47. <http://www.newagepublishers.com/samplechapter/000186.pdf>
 48. <http://data.worldbank.org/indicator/NY.GNP.PCAP.PP.CD>
 49. <http://hdr.undp.org>
 50. <http://www.institutionalinvestor.com>
 51. www.govindicators.org
 52. www.govindicators.org
 53. www.Analytic Group „DA Vinci Ag” LLC

Руководитель исследовательской группы
ОВСЕП ИВАНОВИЧ АГАДЖАНЯН
доктор экономических наук, профессор

Состав исследовательской группы
МАРГАРИАН А.Ш.
кандидат экономических наук, доцент
ВАРДАНИАН А.А.
кандидат экономических наук, доцент
ПЕТРОСЯН А.А.
кандидат экономических наук, доцент
МОВСИСЯН М.Э.
кандидат экономических наук, доцент
ДЖУГАРЯН А.С.
кандидат экономических наук
МИНАСЯН Г.Г.
аспирант

Экономическое развитие

Pассмотрены основные концепции экономического развития с доминирующей позиции человеческого развития, ориентированного на фундаментальные жизненные ценности и направленного на полноценную реализацию человеческого потенциала. Представляя сущность и общее понимание экономического развития, рассматривается вызов ответственного развития, подчеркивая предопределяющую роль государства в его обеспечении или провале. Также обсуждены методологические подходы к исследованиям развития, основные характеристики и направления экономического развития. Предложена концептуальная постановка проблемы человеческого развития, применяя к нему разграничение аспектов эндогенного и экзогенного развития.

В процессе обсуждения новейших подходов к макроэкономической политике, направленной на развитие экономики и модернизации технологий, представлены предложения по пересмотру действующей в РА налогово-бюджетной и денежно-кредитной политики. В проведенных исследованиях в контексте технологических изменений были рассмотрены как изменения основных макроэкономических параметров, так и циклические изменения, в том числе структурные сдвиги в экономике, происходящие в этих условиях.

Даны характеристика инновационной экономики, ее основных особенностей, а также количественные и качественные характеристики стабильного развития экономики стран СНГ. Изучены показатели стабильного развития, среди которых главную роль играют показатели инновационного развития.

Изучена взаимосвязь между некоторыми показателями, характеризующими экономическое развитие, и показателями государственного управления, такими, как эффективность управления, политическая стабильность, качество управления и т.д.

С точки зрения иностранных инвестиций в развивающиеся экономики важно оценить результаты ожидаемого возврата от осуществленного инвестиционного риска. Другими словами, очень важно иметь минимальную предельную оценку возвращения капитала.

Существуют разные подходы к целесообразности вхождения в ЕС или ТС. Исследования различны и противоречивы. В этом контексте была сделана попытка разъяснить влияние различных (исторических, политических, цивилизационных, геополитических, экономических) факторов на вхождение в вышеуказанные системы.

Head of research team

AGHADJANYAN HOVSEP IVAN
Doctor of Sciences, Associate Professor

Members of research team

MARGARYAN A.SH.
PhD in Economics, Associate professor
VARDANYAN A.A.
PhD in Economics, Associate professor
PETROSYAN A.A.
PhD in Economics, Associate professor
MOVSISYAN M.E.
PhD in Economics, Associate professor
JUHARYAN H.S.
PhD in Economics
MINASYAN H.H.
PhD student

Economic Development

The main concepts of economic development based on human development, fundamental life values and targeted to the implementation of human potential were examined. Based on the essence and general understanding of economic development, it was presented the concept of responsible development emphasizing the leading role of the public state in succeeding or defaulting it. It was also discussed the methodological approaches on analyzing the development, the main characteristics and directions of economic development. It was presented the conceptual framework on the problems of human development based on endogenous and exogenous factors of the development.

During the discussions on new approaches to macro economy policies targeted to the development of the economy and modernization of technologies there were suggested some amendments in the fiscal and monetary policies of the Republic of Armenia. While implementing researches within the context of technological changes, it were analyzed the main macro economical indicators, as well as cyclical changes, including structural shifts in the economy.

There were defined the characteristics of innovation economy, the main features of it, as well as quantitative and qualitative indicators of stable economical development of the UIS (Union of Independent States). The data on stable development were analyzed where the main role was devoted to the indicators of innovative development.

It was analyzed the correlation between some indicators describing economical development and indicators on state government, such as efficiency of management, political stability, quality of management, etc.

Within the context of international investors, it is important to assess the expected returns of investments for developing countries. In other words, it is very important to have the minimal thresholds on expected returns.

There are different approaches on entering to European Union or Custom Union. The researches on it are very different and contradictory. Within this context, it was presented different factors (historical, political, civilization, geopolitical, economical) affecting the entry to the mention unions.



Հեղազորական խմբի ղեկավար՝
ՀՈՎՍԵՓ ԽՎԱՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հեղազորական խմբի անդամներ՝
Ա.Շ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ
Ա.Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ
Ա.Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ
Մ.Է. ՄՈՎՍԻՍՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ
Հ.Ս. ԶՈՒՀԱՐՅԱՆ
տ.գ.թ.
Հ.Հ. ՄԻՆԱՍՅԱՆ
ասիստենտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Խմբագիր՝ **Վ. Միրզյան**
Տեխնիկական խմբագիր՝ **Ն. Խչեյան**

Էջադրումը և սրբագրումը՝ **Ռ. Պետրոսյանի**
Ձևավորումը՝ **Ն. Խչեյանի**

Չափս՝ $70 \times 108^{1/16}$:
7 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37

